

Արարատ Մ. Հակոբյան
պատմ. գիտ. դոկտոր

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Զննական զուգակշիռներ՝ 90-ամյա հեռավորությունից*

Մուտք

1921 թ. Փետրվարյան ապստամբությունը Հայոց պատմության վիճահարույց հիմնահարցերից է, որի վերաբերյալ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում ստեղծվել է պատմագիտական և հուշագրական հարուստ գրականություն, կազմվել են փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ:

Հրապարակում առկա աշխատություններն ու հոդվածները կարելի է բաժանել երեք խմբի՝ **խորհրդային, սփյուռքյան և հետխորհրդային**: Այս երեք խմբերը ներկայացնող հեղինակները տարբեր կերպ են լուսաբանել ու գնահատել 1921 թ. իրադարձություններն ընդհանրապես և Փետրվարյան ապստամբությունը մասնավորապես:

Խորհրդահայ պատմաբանները հասկանալի պատճառներով ժամանակին հարկադրված էին փետրվարյան իրադարձությունները շարադրել կոմունիստական կուսակցության դիրքերից, իսկ հաճախ էլ՝ կեղծել, աղավաղել ու գլխիվայր շրջել պատմական փաստերն ու իրողությունները:

Սփյուռքի պատմագիր և հուշագիր հեղինակների դիրքորոշումները ամենևին էլ չէին սահմանափակվում փետրվարյան դեպքերն իբրև օրինաչափ, ինքնաբուխ, համաժողովրդական ապստամբություն որակած՝ դաշնակցական հեղինակների դիրքորոշումներով: Սփյուռքում գործող մյուս կուսակցությունների (Մ.Գ.Հնչակյան, Ռ-ամկավար-ազատական) ներկայացուցիչների և սփյուռքահայ կոմունիստների գնահատականներն էապես չեն տարբերվել խորհրդային պատմագրությունից՝ ապստամբությունը դատապարտելու և այն իբրև ավանտյուրա (արկածախնդրություն) որակելու հարցում:

Հետխորհրդային ժամանակաշրջանում գիտական ասպարեզ է մտել պատ-

* Հեղինակը մեծ աշխատանք է կատարել Փետրվարյան ապստամբության պատմության պատմագրության տարբեր ուղղությունները բաղդատելու և ներկա պետական իրողություններից բխող որոշակի հայեցակարգ մշակելու համար, ուստի զուգակշիռների վրա հիմնված նրա հարցադրումներն արժանի են լուրջ ուշադրության: Սակայն պատմական ճշմարտությանը մոտենալու՝ Ա. Հակոբյանի փորձերը երբեմն հանգում են հակադիր տեսակետները «ոսկե միջինի» բերելու հաշտարարական մոտեցմանը, ինչը թերևս տեղին է քաղաքականության, բայց ոչ գիտության ասպարեզում, ուր ճշմարտությունը միշտ չէ, որ մեջտեղում է գտնվում: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 10. 03. 2011:

մաբան ուսումնասիրողների **երրորդ խումբը**, որը չնայած առկա առանձին դժվարություններին ու հակասություններին (միջկուսակցական խնդիրներ, սուբյեկտիվ նախապատվություններ և այլն), այնուամենայնիվ, արխիվային նորահայտ վավերագրերի հիմքի վրա սկսել է աստիճանաբար վեր հանել 90 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների իրական ու ճշգրիտ պատմությունը:

Հայտնի է, որ Փետրվարյան ապստամբության պատճառների, բնույթի, նպատակների, շարժիչ ուժերի և այլ հարցերի մեկնաբանությունները 70 տարի շարունակ գտնվել են Հայկոմկուս-ՀՅԴ գաղափարաքաղաքական անհաշտ պայքարի տրամագծորեն հակադիր բևեռներում: Այդ հիմքի վրա էլ ծնունդ են առել Փետրվարյան ապստամբությանը տրված հակադիր գնահատականները: Այսինքն՝ մի կողմից 1921 թ. փետրվարյան իրադարձությունները որակվել են որպես «դաշնակցների փետրվարյան ավանտյուրա»¹, իսկ մյուս կողմից՝ «ինքնաբախտ համաժողովրդական ապստամբություն»²:

Այս երկու հակադիր մոտեցումները հիմնահարցի լուսաբանման հիմքում դրել էին ոչ այնքան պատմական փաստերի քննությունը, որքան կուսակցական-գաղափարական պայքարի առաջնահերթությունները: Անշուշտ, ի տարբերություն խորհրդահայ որոշ պատմաբանների, ՀՅԴ պատմագիր-հեղինակները կեղծիքների չեն դիմել, սակայն գիտակցաբար թե անգիտակցաբար շրջանցել, լռության են մատնել կամ էլ ոչ համոզիչ կերպով են մեկնաբանել որոշ անցանկալի փաստեր: Օրինակ՝ դժվար է համաձայնել Ռուբենին և Նժդեհին հասցեագրված 1921 թ. փետրվարի 20-ի նամակում և Գ. Չիչերինին ու Գ. Օրջոնիկիձեին ուղարկված մարտի 10-ի հեռագրում³ Ս. Վրացյանի արտահայտած այն տեսակետին, թե «... ժողովուրդը մեկ մարդու պես կանգնած էր Հայրենիքի փրկության կոմիտեի կողքին»⁴:

Արդեն հետխորհրդային շրջանում՝ անկախ Հայաստանում լույս տեսած աշխատություններում աստիճանաբար ձևավորվում է գիտականորեն հիմնավորված, ամբողջական հայեցակարգ 1921 թ. փետրվարյան իրադարձությունների և Հայոց պատմության այլ վիճելի հարցերի վերաբերյալ:

1 Լեո, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 468, Հակոբյան Արշ., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.), Եր., 1955, էջ 146, Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 336, Հակոբյան Արշ., Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Եր., 1960, էջ 2, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 136, Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 388: Ակադեմիկոս Գալուստ Գալոյանը Հայաստանի անկախացումից հետո իրապարակված իր վերջին «Հայաստանը և մեծ տերությունները», Եր., 1999, մենագրության մեջ արդեն գործածել է «խռովություն» հասկացությունը, տե՛ս էջ 433:

2 Իրազեկ 3, Մոտիկ անցեալից (պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922), Պեյրուք, 1956, էջ 103, Աբրահամյան Մարտիրոս-Քաղաքաբնեցի, Իմ հիշելի հուշերը: Հայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978, էջ 5, Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, հ. 2, Պեյրուք, 1967, էջ 5, 79, Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 566, Սարգսյան Ա., Սարգսյան պատից մինչև Սեւր և Լոզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 120, Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդ. Ժողովը (1890-1924), Աթէնք, 1988, էջ 166: Քաջագունի Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Եր., 1994, էջ 37, Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Դ, Աթէնք, 1995, էջ 129 և ուրիշներ:

3 Տե՛ս Генотид армян (документы и комментарии), сост. проф. Ю. Г. Барсегов, Т. 2, ч. 2, М., 2003, с. 434: Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 2010, էջ 133:

4 Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 566:

1. Փետրվարյան շարժման բնույթը

Հայ պատմագրության մեջ բազմիցս քննարկման է ենթարկվել հետևյալ հարցը. կարելի՞ է արդյոք Փետրվարյան ապստամբությունը համարել քաղաքացիական պատերազմ (կռիվներ), թե՞ ոչ: Հայտնի է, որ քաղաքացիական պատերազմ են համարվում որևէ երկրի քաղաքական ուժերի, դասակարգերի, հասարակության առանձին խմբերի կամ սոցիալական տարբեր շերտերի միջև իշխանության համար մղվող կռիվները:

Ուստի՝ խորհրդահայ պատմագրության մեջ, Ռուսաստանի 1918–1920 թթ. ներքաղաքական արյունալի հակամարտության օրինակով, 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակաշրջանը ևս բնորոշվել է որպես **քաղաքացիական պատերազմ**: Ավելին՝ քաղաքացիական կռիվներ են համարվել ոչ միայն փետրվարյան իրադարձությունները, այլև Չանգեզուրի 1920–1921 թթ. ազատագրական-ինքնապաշտպանական կռիվները⁵: Այս կապակցությամբ խորհրդահայ պատմաբան Արշ. Հակոբյանը 1921 թ. իրադարձությունները բաժանել է անգամ երեք շրջափուլի՝ առաջին՝ Լոռվա «Չեզոք գոտու» միացումը, երկրորդ՝ Փետրվարյան ապստամբությունը և երրորդ՝ Չանգեզուրի միացումը Խորհրդային Հայաստանին⁶:

Ի տարբերություն Արշ. Հակոբյանի՝ խորհրդահայ որոշ հեղինակներ (Ս. Սողոմոնյան, Ա. Վարդապետյան) քաղաքացիական կռիվների սկիզբը համարում են ոչ թե 1921 թ. փետրվարը, այլ 1920 թ. մայիսը՝ նկատի ունենալով Մայիսյան ապստամբությունը⁷ (խառվությունը):

Մեր կարծիքով, քաղաքացիական կռիվների շարքը կարելի է դասել 1920 թ. մայիսյան իրադարձությունները, բայց ոչ հաջորդ դեպքերը, մասնավորապես՝ Չանգեզուրի կռիվները: Ավելին, անգամ Փետրվարյան ապստամբությունը կարելի է քաղաքացիական կռիվներ որակել որոշակի վերապահությամբ. այստեղ քաղաքական իշխանության համար պայքարն ընթացել է ՀՅԴ գլխավորած հակախորհրդային լայն դաշինքի և դրսի ուժի՝ կարմիր բանակի օգնությամբ Հայաստանում հաստատված խորհրդային իշխանության կողմնակիցների միջև: Նման վերապահությունը խիստ անհրաժեշտ է, որովհետև ռազմական առումով վճռական է եղել արտաքին գործոնի՝ ռուսական կարմիր բանակի դերը, որի միջոցով միայն ապահովվեց հայ բոլշևիկների հաղթանակը: Սակայն ֆորմալ (ձևական) տեսանկյունից իշխանության համար պայքարն ընթացել է երկու խմբերի՝ մի կողմից բոլշևիկ և բոլշևիկամետ, իսկ մյուս կողմից՝ հակախորհրդային ու հակաբոլշևիկյան ուժերի միջև: Լիովին անկողմնակալ լինելու համար հարկ է նշել,

5 Տե՛ս Գայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՍՄ ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 163, Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 562, Ղարիբջանյան Գ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Եր., 1955, էջ 441, Бегиян А., Развитие советской государственности в Армении, Е., 1968, с. 22.

Հայաստանում քաղաքացիական կռիվ երկու շրջափուլի մասին (փետրվարյան և հուլիսյան) առաջին անգամ խոսել է Ալ. Մյասնիկյանը 1921 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման առաջին տարեդարձի առթիվ գրած հոդվածում, տե՛ս Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 5, Եր., 2007, էջ 356: 6 Տե՛ս Հակոբյան Արշ., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921–1925 թթ.), Եր., 1955, էջ 59, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ Ա, Եր., 1954, էջ 81–82:

7 Տե՛ս Սողոմոնյան Ա., Քաղաքացիական կռիվները Չանգեզուրում 1920–1921 թթ., Եր., 1958, էջ 1958, էջ 32, Վարդապետյան Ա., Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920–1921 թթ., Եր., 1960, էջ 6:

որ Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) կառավարությունը իր հերթին նույնպես փորձ է արել ստանալ դրսի՝ Արևմուտքի, Վրաստանի և անգամ Թուրքիայի աջակցությունը, բայց ապարդյուն:

Փետրվարյան ապստամբության բնույթի հարցում հետխորհրդային շրջանում որոշակի հստակեցումներ է կատարել պրոֆ. Վլ. Ղազախեցյանը: Վկայաբերելով մի շարք տվյալներ Ղարաբաղի խառնուրդ, Իջևանում, Դիլիջանում, Նոր Բայազետում և այլուր կարմիր բանակի շարքերում կոմսոմոլների ու գյուղացիների առանձին ջոկատների ու խմբերի վերաբերյալ, նա եզրակացրել է. «...1921 թ. փետրվարյան իրադարձությունները քաղաքացիական պատերազմ էին իրենց բնույթով»⁸:

Անվիճելի է, որ խորհրդային իշխանության տապալման 43 օրերին կարմիր բանակի շարքերում կոմսոմոլ են նաև խորհրդային իշխանությանը հավատարիմ մնացած հայ կոմունիստների, բանվորների, գյուղացիների որոշ ջոկատներ, պարտիզանական խմբեր, առանձին զորահրամանատարներ, մտավորականներ, այդ թվում՝ մեծ բանաստեղծ Ե. Չարենցը:

Հետխորհրդային մեկ ուրիշ պատմաբանի՝ Ա. Սիմոնյանի կարծիքով, Փետրվարյան ապստամբության արդյունքում ծավալված քաղաքացիական կռիվի մեջ շահագրգռված էին և՛ դաշնակցականները, և՛ կոմունիստները, որովհետև «Դաշնակցության բարձրագրած ապստամբությունը գերազանցապես ունեցել է որոշակի իրավիճակից բխող գործնական խնդիր. այն է՝ վերջ տալ երկրում ծայր առած անօրինություններին, բանտից արձակել ձերբակալվածներին և հնարավորության դեպքում վերականգնել Հայաստանի անկախությունը»⁹:

ՀՅԳ հուշագիր-հեղինակներից Հ. Քաջազունին, Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը նույնպես փետրվարյան իրադարձությունները որակել են որպես քաղաքացիական կռիվներ¹⁰:

Այսպիսով՝ հայ պատմագրության վերը նշված **երեք խմբերը** ընդհանուր առմամբ համամիտ են փետրվարյան իրադարձությունները քաղաքացիական պատերազմ որակելու հարցում:

Սակայն, եթե Փետրվարյան ապստամբությունը այսպես թե այնպես կարելի է դասել քաղաքացիական պատերազմի կամ կռիվների շարքը, ապա, մեր կարծիքով, Լոռու և Չանգեզուրի իրադարձությունները՝ ոչ: Պատահական չէ, որ Գ. Նժդեհը առաջիններից մեկն է, ով Չանգեզուրի գոյամարտը կամ հերոսամարտը անվանել է «**ինքնապաշտպանություն**»¹¹: Իրոք, նման բնորոշումը համապատասխանում էր Չանգեզուրի կռիվների բովանդակությանը, որովհետև երկրամասի ժողովուրդը ինքնապաշտպանական մարտեր էր մղում թուրք-թաթար-բոլշևիկյան (կարմիր բանակի) ոտնձգությունների դեմ՝ երկրամասը պաշտպանելու և որոշակի երաշխիքներով մայր հայրենիքին միավորելու նպատակով: «Մեր կռիվը, գրում է Գ. Նժդեհը, - չէր մղվում այս կամ այն կուսակցության կամ դասակարգի դրոշի տակ: Նա ուղղված չէր խորհրդային իրավակարգի դեմ: Հայկական լեռնաշխարհը Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը-սիս թե ի՞նչն էր մեր բա-

8 Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 83:

9 Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը, Եր., 2000, էջ 413-414:

10 Տե՛ս Քաջազունի Հ., Գ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 37, Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Պեյրուք, 1968, էջ 326, Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, հ. 2, Պեյրուք, 1967, էջ 17, 24, 198:

11 Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 8:

գույրը զինել և մեզ լեռները հանել»¹²:

Ուստի, ի տարբերություն Փետրվարյան ապստամբության ու նրան հետևած մարտերի՝ Ջանգեզուրի իրադարձությունները ազգային-ազատագրական, ինքնապաշտպանական կռիվներ էին թուրք-թաթար-ռուս բոլշևիկյան զորքերի դեմ՝ կանխելու համար երկրամասը Ադրբեջանին կցելու փորձերը: Այդ հավասարապես օտար ուժերի դեմ պայքարողը Ջանգեզուրի գյուղացիներն ու ՀՅԳ մարտական խմբերն էին իրենց հերոսական վաշտերով: Իհարկե, այս պայքարում հակաթուրքականից բացի եղել է նաև հակախորհրդային միտում, բայց կարծում ենք, որ այն գերակայող չէր:

Նույնը վերաբերում է նաև Լոռվա «Չեզոք գոտու» 1921 թ. փետրվարի 11-12-ի զինված ելույթին, որն արտաքուստ իրականացվել է բոլշևիկյան կարգախոսների ներքո: Սակայն Լոռում տեղի ունեցած այս գյուղացիական ապստամբությունը ևս խորհրդահայ պատմագրության կողմից բնորոշվել է իբրև քաղաքացիական կռիվ¹³: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ «Չեզոք գոտում» տեղի ունեցածը կարմիր բանակի օգնությամբ հայ գյուղացիների զինված ապստամբություն էր: Ապստամբության նպատակը մի կողմից երկրամասը խորհրդայնացնելն էր (իբրև առաջին քայլ Վրաստանի խորհրդայնացման ճանապարհին), իսկ մյուս կողմից՝ այն մենշևիկյան Վրաստանի տիրապետությունից ազատագրելն ու մայր Հայաստանին միավորելը:

2. Ապստամբության պատճառներն ու նախապատրաստման ընթացքը

Փետրվարյան ապստամբության պատճառների ու նախապատրաստման վերաբերյալ խորհրդահայ պատմագրությունը հիմնականում զարգացրել է այն տեսակետը, թե իբր՝ իշխանությունից հրաժարվելուց անմիջապես հետո ՀՅԳ-ն, չհաշտվելով իր տիրապետության տապալման փաստի հետ, արդեն 1920 թ. դեկտեմբերյան առաջին օրերից ծրագրել ու նախապատրաստել է զինված ապստամբություն՝ իր իշխանությունը վերականգնելու նպատակով: Ուստի դաշնակցականները համախմբել են «հակահեղափոխական ուժերին» և օգնության խնդրանքով դիմել Անտանտի կառավարություններին, մենշևիկյան Վրաստանին և անգամ՝ քենալական Թուրքիային: Արդյունքում՝ օգտվելով Հայաստանի խորհրդային կառավարության թույլ տված առանձին սխալներից ու վրիպումներից, զինված խռովություն են բարձրացրել և ժամանակավորապես իշխանությունը վերցրել իրենց ձեռքը¹⁴: Սա է 1921 թ. փետրվարյան իրադարձությունների վերաբերյալ խորհրդահայ պատմագրության հիմնական հայեցակարգը: Փաստենք,

12 Նժդեհ Գ., նույն տեղում:

13 Տե՛ս Ղարիբջանյան Գ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Եր., 1955, էջ 441:

14 Տե՛ս Ղարիբջանյան Գ.Բ., մշվ. աշխ., էջ 450, Աղայան Ծ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Եր., 1957, էջ 352, Հակոբյան Արշ., Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Եր., 1960, էջ 31, Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գոծում (1917-1921թթ.), Եր., 1966, էջ 207, Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), Եր., 1970, էջ 143, Օհանջանյան Բ., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.), Եր., 1982, էջ 73, Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 375-377, 388-389, Հայկական սովետական հանրագիտարան (ՀՄՅ), հ.12, Եր., 1986, էջ 334, Արզումանյան Ս., Դարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 559 և ուրիշներ:

որ այս և մյուս հարցերում խորհրդահայ պատմագրության տեսակետները ավելի կամ պակաս հետևողականությամբ պաշտպանել են նաև Սփյուռքի ոչ դաշնակցական և անգամ նախկին դաշնակցական շատ հեղինակներ, այդ թվում՝ Ա. Յափուճյանը, Թ. Վեհապետյանը, Հրաչ Երվանդը, Մ. Ավետյանը, Ա. Դարբինյանը, Լ. Չորմիսյանը, Շահան Նաթալին և ուրիշներ¹⁵:

Այսպես, Շահան Նաթալին կարծում էր, որ «Կորսուած աթոռները վերգտնելու եւ անհատական դիրքեր վերականգնելու մէջ պետք է փնտռել իրական հիմքը փետրվար 18-ի ապստամբութեան»¹⁶: Այս տողերը գրել է ՀՅԴ շարքերից հեռացած այն գործիչը, ով փետրվարյան իրադարձությունների շրջանում երիտթուրք ոճրագործների ահաբեկման «Նեմեսիս» ծրագրի կազմակերպիչներից մեկն էր:

Սփյուռքահայ մեկ այլ հեղինակ՝ Ավետիս Եափուճյանը, Հայաստանի խորհրդայնացման և փետրվարյան «արկածախնդրության» մասին գրել է խորհրդահայ պատմագրության դրույթներին այնքան մեծ նվիրումով ու հարազատությամբ, որ կարծես գիրքը դուրս է եկել բուլշևիկի գրչի տակից¹⁷:

Ռամկավար գործիչներ Հրաչ Երվանդը, Արտակ Դարբինյանը և ուրիշներ ավելի մեղմ են քննադատել «փետրվարյան խռովությունը» հայ ժողովրդի համար այն համարելով չարիք¹⁸: Մինչդեռ, հայտնի է, որ Փետրվարյան ապստամբության օրերին Հայաստանի և Սփյուռքի ռամկավար-ժողովրդականների գնահատականները բոլորովին տարբեր են եղել: Եթե Հայաստանի ռամկավարները մասնակցել ու աջակցել են Փետրվարյան ապստամբությանը, ապա արտասահմանյան ռամկավարները այն որակել են իբրև չարիք: Թերևս վերջիններս լավ պատկերացում չեն ունեցել ապստամբության իրական պատճառների ու մասշտաբների մասին:

Փետրվարյան ապստամբության կապակցությամբ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նախկին դաշնակցական Լևոն Չորմիսյանի կողմից արված հետևյալ երկու էական ճշգրտումները: Նրա կարծիքով՝ «փետրվար 18-ը» քաղաքական-բարոյական առումով ունեցել է երկու հետևանք. 1) «այն նիսբականացրեց, բիրտեղացրեց հակասովետական ոգին» (այսինքն՝ մեզանում հակասովետիզմի սկիզբը դրեց, ինչը, մեր կարծիքով, ճշմարիտ է), և որ 2) «Մեր ներքին խնդիրներու կարգադրութեան մէջ օտար ուժեր հրալիրելու, օտարին դիմելու քաղաքականութեան մը հետևողական գիծը սահմանեց» (նկատի ունեւր դիմումը Թուրքիային)¹⁹:

Սակայն, Լ. Չորմիսյանի 2-րդ եզրահանգմանը չի կարելի համաձայնել այն իմաստով, որ առաջին անգամ օտարին, տվյալ պարագայում՝ ռուսական կարմիր

15 Տե՛ս Շահան Ն., Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930-ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), Կ. Ա. Մարտիլ, 1934, էջ 236-238, Շահան Ն., Երեւանի համաձայնագիրը, Պոսթըն, 1941, էջ 80, Ավետյան Մ., Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) հուշամատյան և գոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 470-471, Յափուճեան Ա., Ո՞վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը և ի՞նչ եղաւ անոր հետեւանքը, Գահիրէ, 1969, էջ 3-6, Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Եր., 1995, էջ 108-110, Վեհապետեան Թ., Նոր Սերունդ՝ Քաղութեան նոխագ, Կ. Ք., Պէրոս, 1985, էջ 106, Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890-1940), Եր., 2003, էջ 280-285 և ուրիշներ:

16 Շահան Ն., Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930-ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), Կ. Ա. Մարտիլ, 1934, էջ 20:

17 Տե՛ս Եափուճեան Ա., նշվ. աշխ., էջ 3-4:

18 Տե՛ս Երվանդ Հ., Ռամկավար Ազատական Կուսակցութիւն (իր այսօրը և վաղը), Պոսթըն, 1927, էջ 25, Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890-1940), Եր., 2003, էջ 280:

19 Տե՛ս Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Եր., 1995, էջ 110:

բանակին Հայաստան հրավիրելու փորձը կատարել են Հայաստանի բոլշևիկները՝ 1920 թ. Մալխյան ապստամբության կապակցությամբ:

Արխիվային վավերագրերի, հուշերի և մամուլի ուսումնասիրությունը բերում է այն հետևությանը, որ հիմնավոր ու համոզիչ չէ խորհրդահայ և նրան ձայնակցող Մփյուռքի ոչ դաշնակցական հեղինակների այն պնդումը, թե իբր՝ ՀՅԴ-ն իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց անմիջապես հետո է ձեռնամուխ եղել կորցրածը հետ վերադարձնելու և ապստամբություն նախապատրաստելու գործին: Փաստերը ցույց են տալիս, որ ՀՅԴ-ի հայաստանյան ղեկավար մարմինը իրականում նման հետևության է հանգել 1921 թ. հունվարի վերջերին: Այդ օրերին Հայ-հեղկոմի գործադրած զանգվածային բռնագրավումների, բանտարկությունների, սպաների աքսորի և այլ բռնությունների պայմաններում հրավիրվում է նաև ՀԿ(Բ)Կ կենտկոմի հունվարյան պլենումը, որը ձայների մեծամասնությամբ ընդունում է ՀՅԴ-ի դեմ ուղղված երեք կետանոց բանաձև՝ անխնայ պայքար մղելու և ՀՅԴ-ի աշնակցությունը որպես կուսակցություն ջախջախելու վերաբերյալ²⁰:

Հետագայում՝ սկսած 1950-ական թվականներից, խորհրդահայ պատմագրության մեջ ավելի կամ պակաս հանգամանալիությամբ բացահայտվել են այս հարցի հետ կապված 1921 թ. սկզբներին (հունվար-փետրվար) ՀԿ(Բ)Կ կենտկոմում և Հայհեղկոմում ծագած տարածայնությունները: Պարզվել է, որ ՀՅԴ-ի և մյուս ընդդիմադիր կուսակցությունների հանդեպ քաղաքականության հարցում ի հայտ էր եկել երկու հոսանք: Դրանցից մեկը, որը կենտկոմում մեծամասնություն է կազմել (Գ. Ալիխանյան, Ավիս, Ի. Դովլաթյան, Կ. Այվազյան, Հ. Կոստանյան և այլք), կողմ է եղել ՀՅԴ-ի դեմ ավելի կոշտ ու բռնի քայլերին, իսկ փոքրամասնություն կազմող մյուս հոսանքը (Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ա. Բեկզադյան)՝ ավելի մեղմ, հանդուրժողական քաղաքականությանը: Վերջինիս ներկայացուցիչները դեմ են արտահայտվել զանգվածային բռնագրավումներին, նախկին սպաների աքսորին և այլ ձեռնարկումներին: Ս. Կասյանը և Ա. Մռավյանը, համաձայն չլինելով կենտկոմի մեծամասնության գծին, անգամ հայտարարում և դուրս են գալիս հեղկոմի և կենտկոմի կազմից:

Այս առնչությամբ դժվար է համաձայնել սփյուռքյան հեղինակ Հ. Քյուրքճյանի հետ, որը Փետրվարյան ապստամբության և քաղաքացիական կռիվների բորբոքման հարցում հավասարության նշան է դրել Ս. Կասյանի, Ավիսի և Գ. Աթաբեկյանի միջև՝ իբրև 1921 թ. արյունալի իրադարձությունների մեջ այդ եռյակի «ոճրային գործունեության»²¹ հետևանք:

Հարկ է նշել, որ Բաքվում և Մոսկվայում մույնպես դժգոհ են եղել դաշնակցականների նկատմամբ Ս. Կասյանի և Ա. Մռավյանի մեղմ վերաբերմունքից: Այն փաստը, որ ՀՅԴ-ի աշնակցության նկատմամբ վարվող կոշտ քաղաքականությունը հրահրվում էր դրսից, երևում է ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամներ Գ. Օրջոնիկիձեի և Մ. Օրախելաշվիլիի՝ Ս. Կասյանին ուղղված 1921 թ. փետրվարի 1-ի թիվ 1083 հեռագրից. «Կարծում ենք, որ քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է պայքարել դաշնակցների կուսակցությունը ուղղակի վերացնելու, նրանց կազմակերպությունների պատասխանատու ղեկավարներին,

20 Տե՛ս Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ (այսուհետև՝ ՌԱՔՊԱ), ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 1, Յ.3. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող Վ. Դազախեցյան, Եր., 1999, էջ 14 (այսուհետև՝ Յ.3. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը):

21 Պատմագրութիւն Յ.Յ.Դ., հ. Դ, Աթենք, 1995, էջ 12:

ինչպես նաև Արտակարգ դատարանի և այլ հակաժողովրդական հիմնարկությունների վարկաբեկված անդամներին մեկուսացնելու համար»²²: Միաժամանակ Օրջոնիկիձեն զգուշացնում էր, որ այդ պայքարը չպետք է ուղղվի մտավորակա-նության դեմ՝ թեկուզև դաշնակցական անցյալով²³:

Պարզաբանենք ավելի հանգամանորեն. հայտնի է, որ ՀՀ կառավարությունը Երևանի դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագրով իշխանությունը խա-ղաղ կերպով զիջեց բուլշևիկներին: Այդ նույն օրը ՀՅԴ գերագույն գործադիր մա-մինը՝ Բյուրոն, պաշտոնապես դադարեցրեց իր գործունեությունը Հայաստանի սահմաններում, նախօրեին՝ դեկտեմբերի 1-ին, կայացնելով հետևյալ որոշումը. «Հարկադրված երկու կողմերի ճնշումից՝ Բյուրոն հեռանում է Հայաստանից՝ թող-նելով իր ներկայացուցիչը, և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայ-մանների համաձայն գործել և զաղտնի պահել կուսակցության գոյությունը, իսկ ընկերներին չի արգելվում մտնել նոր իշխանության մեջ և աշխատել երկրի տնտե-սական և կուլտուրական զարգացման համար»²⁴: Այս որոշումից բնավ էլ չի երևում, թե ՀՅԴ-ն իր առաջ ապստամբության նախապատրաստվելու և իշխա-նությունը գրավելու նպատակ էր դրել: Ընդհակառակը՝ խորհուրդ էր տրվում իր անդամներին ու մարմիններին օրինապահ կերպով մասնակցել երկրի տնտեսա-կան և կուլտուրական վերաշինությանը:

Ու թեև հայտնի է, որ դեկտեմբերի 2-ից հետո Հայաստանում մնացած դաշնակ-ցական որոշ գործիչներ, հանդես բերելով զգուշավորություն, գործում էին կիսալե-զալ պայմաններում, բայց ՀՅԴ երևելի դեմքերից ոմանք նույնիսկ պաշտոններ էին զբաղեցնում խորհրդային պետական մարմիններում, այդ թվում՝ Դրոն, Ս. Վրացյանը, Հ. Քաջազունին, Հ. Տերտերյանը և ուրիշներ:

Նոր պայմաններում վերակառուցելով իր գործունեությունը, ՀՅ Դ-աշնակցությունը նախ և առաջ հիմք էր ընդունել Երևանի համաձայնագրի պայ-մանները, որ չեն հետապնդվի ՀՅԴ-ի և Հայաստանի մյուս սոցիալիստական կու-սակցությունների ու ՀՀ նախկին կառավարության անդամները, պաշտոնյաները, սպաները և այլն:

Բայց տարօրինակ է, որ Երևանի համաձայնագրի կնքման օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, այդ փաստաթուղթը ստորագրած Բ. Լեգրանը Բաքու՝ Գ. Օրջո-նիկիձեին ուղղված հեռագրում հայտնել է, որ ինքը կարգադրել է անհապաղ ձեր-բակալել Հայաստանի նախկին վարչապետ Հ. Օհանջանյանին, նրա կաթինների բոլոր անդամներին և մի շարք «այլ հակահեղափոխական գործիչների»²⁵: Այդ նպատակով զաղտնի կերպով Երևան էին ժամանել նաև չեկիստական ուժեր: **Պատմաբան Ա. Վիրաբյանի կողմից վերջերս հայտնաբերված այս փաստաթուղ-թը ցույց է տալիս, որ Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուց-չությունը նախօրոք կազմել էր այն մարդկանց ցուցակները, որոնք ձերբակալվե-լու էին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ժամերին:**

Ուստի՝ տեղին է նկատել ակադեմիկոս Գ. Գալոյանը. «Լեգրանի ձեռնարկած այս քայլերը ամբողջովին հակասում էին այդ նույն օրը Դրոյի և Տերտերյանի հետ

22 Գ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 17:

23 ՌՍԲԴՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 118, ք. 1:

24 Գ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 10, Գալոյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Եր., 2005, էջ 327:

25 Վիրաբյան Ա., Գ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2009, N 1, էջ 107:

ստորագրած համաձայնագրի ոգուն և, ըստ էության, չեղյալ էին հայտարարում այն: Այս լուրջ սխալը խոր դժգոհություն առաջացրեց երկրում և սկիզբ դրվեց հակախորհրդային խմորումների²⁶»: Այստեղից ակներև է, որ հակախորհրդային խմորումները սկսվել են խորհրդայնացման առաջին իսկ օրից և դրանց պատճառը պետք է փնտրել խորհրդային իշխանության վարած քաղաքականության մեջ:

Լիովին կեղծ է և իրականությանը չի համապատասխանում նաև խորհրդային շրջանի ուսումնասիրություններից մեկում արտահայտված այն տեսակետը, թե խորհրդայնացված Հայաստանից հեռանալու ճանապարհին՝ Բզովդալ (Բազում) գյուղում, Հ. Օհանջանյանի և նրա գործընկերների (թվով՝ 17 հոգի) ղեկտեմբերի 6-ի ձերբակալությունը ինքնակամ որոշել են իրականացնել Հաջիդարա (Լեռնապատ) գյուղի բոլշևիկները՝ Միսակ Տեր-Գևորգյանի գլխավորությամբ²⁷: Այնինչ 17 հոգու ձերբակալման հրահանգը նախապես ստացվել է Երևանից և այդ նպատակով գործուղվել է հետապնդող «կարմիր պարտիզանների» գաղտնի խումբ՝ Ե. Վանիկի ղեկավարությամբ²⁸: **Իսկ ՀՀ նախկին կառավարության անդամների ձերբակալելու վերաբերյալ մանդատը Ե. Վանիկին տվել էր Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը: Սա միջազգային իրավունքի տեսակետից չլաված բան էր, քանզի արտասահմանյան պետության լիազոր ներկայացուցիչը հրահանգ էր տալիս ձերբակալել տվյալ երկրի քաղաքացիներին:** Մինչդեռ, խորհրդահայ պատմաբան Ս. Ալիխանյանը «օրինական» էր համարում Հ. Օհանջանյանի նախկին կաբինետի անդամների բանտարկությունը²⁹:

Նման բացահայտ հետապնդում-հալածանքների պայմաններում ՀՅԴ Երևանի կառույցը ղեկտեմբերի 19-ին ստեղծում է ղեկավար մի մարմին՝ Հայաստանի կոմիտե Ս. Վրացյանի ղեկավարությամբ և աստիճանաբար անցնում է ընդհատակյա (անլեգալ) գործունեության: Բայց կուսակցական գաղտնի մարմնի ստեղծումը դեռևս չէր նշանակում զինված ապստամբության նախապատրաստում ու կազմակերպում: Այլ բան է, որ հետագա դեպքերի զարգացումը հանգեցրեց այդ քայլին:

Այնհայտ է, որ ղեկտեմբերի երկրորդ կեսից մինչև 1921 թ. հունվարի վերջերը ՀՅԴ Հայաստանի կոմիտեն դեռևս ապստամբություն բարձրացնելու մտադրություն չի ունեցել: Հունվարի սկզբներին աքտրվեց Դրոն՝ իր մերձավորներով, իսկ երկրորդ կեսին՝ 1400-ից ավելի նախկին սպաներ և զինվորներ: Եվ այդ ընթացքում որևէ ընդվզում չի եղել, եթե հաշվի չառնենք Բաշգառնիի հունվարի 22-ի դիմադրության դեպքը: Իհարկե, կան որոշ փաստեր, որ առանձին անհատներ՝ գործիչներ, հայդուկապետեր, տեսնելով թեժացող իրավիճակը, ընդվզելու կոչեր են արել: Ըստ Հ. Քաջազնունու՝ «...ապստամբութեան նախօրեակին մի քանի անհատ դաշնակցականներ, մի քանի գիտերում (մասնավորապես՝ Կոտայքում) որոշ մասնակցութիւն են ունեցել նախապատրաստութիւնների մէջ: Բայց սա կուսակցութեան գործը չէր, այլ կուսակցական անհատների: Ապստամբութիւնը բռնկելուց յետոյ էր միայն, որ կուսակցութիւնը հրապարակ եկաւ... ու գլուխ անցաւ մի շարժ-

26 Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923), Եր., 1999, էջ 374:

27 Տես Յին բոլշևիկների իշխողություններ, գիրք 2-րդ, Եր., 1961, էջ 716-721:

28 Տես Վիրաբյան Ա., Գ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2009, N 1, էջ 108-110:

29 Տես Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Եր., 1966, էջ 207:

ման, որի հեղինակը ինքը չէր»³⁰:

Ուստի Հ. Քաջազունին համոզմունք էր հայտնում, որ ապստամբության պատճառները պետք է փնտրել բոլշևիկների վարած քաղաքականության մեջ: Բոլշևիկները հակահեղափոխական էին փնտրում այնտեղ, ուր նա չկար ու «իրանք իրանց դեմ զինեցին ժողովուրդը»³¹:

Եթե տեսականորեն կարելի է վերապահությամբ մոտենալ Ս. Վրացյանի, Հ. Տեր-Հակոբյանի, Ռ. Դարբինյանի ու մյուս գործիչների ասածներին և դրանք լիարժեք ճշմարտություն չհամարել, ապա կարծում ենք, որ Հ. Քաջազունու վերոնշյալ դատողություններն ու հետևությունները անկողմնակալ են և կասկած չեն հարուցում: Չէ՞ որ Հ. Քաջազունին իր հայտնի աշխատությամբ նպատակ ուներ հիմնավորել ՀՅԴ-ի՝ հայ քաղաքական կյանքում անելիք չունենալու հանգամանքը, իսկ Փետրվարյան ապստամբության վաղօրոք կազմակերպված լինելու փաստը կարող էր խոսել հենց այդ թեզի օգտին: Բայց նա ճշմարտության առաջ չմեղանչելու համար չի դիմել նման քայլի:

Որ ՀՅԴ-ն ի սկզբանե ապստամբություն բարձրացնելու և իշխանություն գրավելու նպատակ չի ունեցել, վկայում է նաև հայտնի խմբապետ Բաշգառնեցի Մարտիրոսը: Նա իր հուշերում պատմում է, որ դեկտեմբերի վերջերին Ռուբենը իրեն ուղարկում է Երևան՝ բանտարկված դաշնակցականներին որևէ կերպ՝ «կաշառքի, գաղտնի փախուստի կամ ապստամբության միջոցով ազատելու համար»³²: Ռուբենի մատնանշած նման «ապստամբության» նպատակը եղել է ոչ թե կրկին իշխանությունը գրավելը, այլ «կաշառքի», «գաղտնի փախուստի» հետ միասին՝ այն դիտվել է բանտարկված գործիչներին բանտից ազատելու և Լեռնահայաստան հասցնելու միջոցներից մեկը:

Որ դաշնակցական գործիչների նախնական պլանը ապստամբությունը չի եղել, այլ բանտարկված կուսակիցներին ազատելը, փաստում է նաև Կարո Սասունին: Նա իր հուշերում պատմում է, որ սկզբում՝ փետրվարի 11-ին, ծրագրել էին Արագածի արևմտահայ աշխարհագրային մահապարտների մի ջոկատով քաղաքամերձ այգիներով մոտենալ բանտին, անակնկալ գրավել այն և ազատելով բանտարկյալներին՝ փախցնել լեռներ և այնտեղից էլ՝ արտասահման³³: Բայց շուտով այդ պլանը փոխվում է և ՀՅԴ-Հայաստանի կոմիտեի փետրվարի 13-ի գաղտնի նամակով որոշվում է դիմել ավելի մեծ գործողության, այսինքն՝ իրական ապստամբության³⁴:

Այսպիսով, ապստամբության գաղափարը ՀՅԴ շարքերում խմորվել է 1921 թ. Խոնվարի վերջին և փետրվարի սկզբին: Դրան նպաստել են ռազմակոմունիստական բռնագրավումների, հալածանք-հետապնդումների բոլշևիկյան քաղաքականությունից կուտակված դժգոհությունը, Խոնվարի կեսերին Հայաստան ժամանած Համառուսաստանյան չեկայի լիազոր Գ. Աթաբեկյանի անսանձ գործողությունները, սպաների աքսորը և վերջապես՝ Հայկոմկուսի կենտկոմի Խոնվարվերջյան որոշումը՝ ՀՅԴ դեմ անողոք պատերազմ հայտարարելու և իբրև

30 Քաջազունուհի Յ., Գ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 37:

31 Քաջազունուհի Յ., նույն տեղում:

32 Աբրահամյան Մարտիրոս-Բաշգառնեցի, Իմ հիշելի հուշերը: Դայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978, էջ 29):

33 Տե՛ս Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Չայրենիք», Պոսթըն, 1925, N 1, նոյեմբեր, էջ 87:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 88:

կուսակցություն վերացնելու մասին: Այդ ամենը նախադրյալ է ստեղծել ապստամբության հասունացման համար:

3. Ապստամբության անմիջական առիթը

Վերջին շրջանում հայտնաբերված արխիվային վավերագրերը վկայում են, որ անընդունելի պետք է համարել պատմագրության մեջ տարածված այն վարկածը, երբ հայ սպաների արքայի կազմակերպումը և այլ չարագործությունները հիմնականում վերագրվում են Գ. Աթաբեկյանին և Ավիսին՝ այդ ամենը դիտելով իբրև վերջիններիս անձնական նախաձեռնություն: Իրականում նրանք կատարել են իրենց վերադասի՝ ՌՄՖԽՀ ռազմահեղափոխական խորհրդի նախագահ, ռազմական գործերի ժողկոմ Լև Տրոցկու հրահանգները: Պարզվում է, որ ՀՀ նախկին բանակի սպաների՝ ղեպի Ռուսաստան արքայի հարցը բարձրացրել է Լ. Տրոցկին 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին (հավանաբար՝ 17-ին): Նա պահանջել է, որպեսզի «բոլոր դաշնակցական սպաները ուղարկվեն Ռուսաստան, իսկ նրանց տեղը զբաղեցնեն ռուս սպաները և զինվորները»³⁵: Նման պահանջը հետապնդել է երկու նպատակ. ա) որպեսզի ամրապնդվի Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի միջուկը և բ) որպեսզի թուրքերի մոտ կասկած չառաջանա, թե Հայաստանի կարմիր բանակը կազմված է դաշնակցական սպաներից:

Ի կատարումն Լ. Տրոցկու հրահանգի՝ Հայհեղկոմը դեկտեմբերի 19-ի նիստում որոշում է Հայկական և դեմիկիյան բանակների սպաներին Բաքու ուղարկելու համար հանձնարարել հանրապետության զինվորական կոմիսարիատներին՝ «պատրաստել հիշյալ անձանց ցուցակները՝ լուծելու համար նրանց տեղափոխման հարցը»³⁶: Սա նշանակում է, որ նախկին սպաների արքայի հարցը բարձրացվել է տակավին 1920 թ. դեկտեմբերին:

Ինչ վերաբերում է չեկիստ Գ. Աթաբեկյանի՝ Հայաստանում անսանձ գործելու վարկածին, ապա մարտի 9-ին Դիլիջանից Ա. Մռավյանի գրած մամակից պարզվում է, որ նրան մեծ լիազորություն էր տվել նաև ՀԿ(բ)Կ կենտկոմը³⁷:

Հետագա դեպքերը զարգացան այնպես, որ ապստամբության համար լրացուցիչ խթան դարձան փետրվարի 9–10-ի նոր զանգվածային ձերբակալությունները: Բանտում հայտնվեցին նոր իշխանությունների հանդեպ համեմատաբար լոյալ գործիչները՝ Հ. Քաջագունի, Ն. Աղբալյան, Լ. Շանթ, Էսեռ Ի. Տեր-Ներսիսյան, սոցիալ-դեմոկրատ Դ. Անանուն և այլք: Գ. Աթաբեկյանի տվյալներով՝ փետրվարի 9-ին միայն Երևանում ձերբակալվել են 100-ից ավելի դաշնակցականներ³⁸: Ս. Վրացյանը վկայում է, որ ձերբակալությունների մասին հրահանգը ստացվել էր Բաքվից³⁹: Պատմաբան Վլ. Ղազախեցյանի տեղեկացմամբ՝ փետրվարի 11-ի դրությամբ բանտարկյալների ընդհանուր թիվը հասել էր մինչև 3000-ի⁴⁰: Դրանք փաստորեն քաղբանտարկյալներ էին:

Հասկանալի է, որ այս ամենը լցրեց համբերության բաժակը, ու դրան հետևեց փետրվարի 12-ին (որոշ հեղինակների մոտ՝ 13-ին) Կոտայքի Ջառ գյուղում հրա-

35 Геноцид армян (док. и ком.), сост. проф. Ю. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 337.

36 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 12:

37 Տե՛ս նույն տեղում, գ. 79, թ. 1:

38 Տե՛ս ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 35, թ. 25:

39 Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 559:

40 Տե՛ս Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 48: Ավելի մանրամասն տե՛ս «Վեմ»-ի ներկա համարի «Վավերագրեր» բաժնում: Համո Կ. Սուքիասյանի կողմից հրապարակվող փաստաթղթերը:

վիրված գաղտնի ժողովը՝ ՀՅԳ Հայաստանի կոմիտեի անդամ Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկ) նախագահությամբ: Ժողովը որոշում է տապալել խորհրդային իշխանությունը: Հետաքրքիր է պարզել ՀՅԳ Բյուրոյի ներկայացուցիչ և ՀՅԳ Հայաստանի կոմիտեի լիազոր Ս. Վրացյանի իրազեկության աստիճանը Ջառի գաղտնի ժողովի և նրա ընդունած որոշման մասին: Չեկայի հետապնդումներից խույս տալով, փետրվարի սկզբներին (մինչև 11-ը) նա թաքնված է եղել Երևանի Գետառչայ թաղում, ապա Կոնդում՝ իր ծանոթներից մեկի բնակարանում⁴¹: Հենց Կոնդում փետրվարի 13-ին նա ստանում է ծածկագիր նամակ՝ փետրվարի 16-ի - լույս 17-ի գիշերը Երևանում ապստամբություն սկսելու մասին:

Ս. Վրացյանի հուշերում առկա վկայությունները հակասական են՝ Ջառ գյուղի ժողովի վերաբերյալ նրա տեղեկացվածության առումով: Մի տեղ պատմում է, որ ինքը «լավ տեղյակ էր օրվա անցուդարձին և տեղեկություններ էր ստանում Եփրեմ Մարգարյանից և Հակոբ Տեր-Հակոբյանից, Կոտայքից»⁴²: Իսկ մեկ այլ տեղ նրա ասածից ստացվում է, որ ինքը մինչ Թ. Խանադյանի բերած փետրվարի 13-ի նամակը կարծես տեղյակ չի եղել Ջառի ժողովի մասին⁴³: Կարծում ենք, որ առանց ՀՅԳ Հայաստանի կոմիտեի լիազոր ներկայացուցիչ Ս. Վրացյանի գիտության, այդ նույն կոմիտեի անդամ Իրազեկը չէր կարող ժողով գումարել և ապստամբություն սկսելու վերաբերյալ որոշում կայացնել:

4. Բուլչևիկ գործիչներն՝ ընդդեմ խորհրդահայ պատմաբանների

Խոսելով Փետրվարյան ապստամբության պատճառների մասին՝ խորհրդահայ շատ հեղինակներ առանձնապես չեն կարևորել խորհրդային կառավարության քաղաքականության («նազմական կոմունիզմ», բռնագրավումներ, սպաների աքսոր, բանտարկություններ և այլն), ինչպես նաև՝ ժողովրդի համար առաջացած օբյեկտիվ դժվարությունների (շրջափակում, ցուրտ, սով և այլ գործոններ) քննությունը: Խորհրդահայ առավել ձախ տրամադրված հեղինակները առհասարակ չեն արձանագրել այդ դժվարությունների՝ ապստամբության պատճառ դառնալու փաստը⁴⁴: Նույն տեսակետն են պաշտպանել նաև Սփյուռքի որոշ հեղինակներ⁴⁵: Իսկ պատմաբանների մի մասն էլ եթե անգամ թվարկել է երկրում ստեղծված դժվարությունները և Հայհեղկոմի թույլ տված սխալները, շեղումները, ապա դրանք մատնանշվել են այնքանով, որքանով՝ «դաշնակ հակահեղափոխականները» օգտվեցին թույլ տրված կոպիտ սխալներից ու նախապատրաստեցին փետրվարյան ավանտյուրան կամ խռովությունը⁴⁶:

41 Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. 2, Պեյրոս, 1967, էջ 17:
 42 Վրացեան Ս., նշվ., աշխ., էջ 17:
 43 Տե՛ս Վրացեան Ս., նշվ., աշխ., էջ 22:
 44 Տե՛ս Эльнибекян А. М., От ревкомов к советам, Е., 1978, с. 28, Հակոբյան Արշ., Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Եր., 1960, էջ 31, Վարդանյան Յ., Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բուլչևիկների մղած պայքարի պատմությունից(1903-1920), Եր., 1962, էջ 206-207, Լեո, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 461-468, Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գ. 2, Եր., 1975, էջ 549 և ուրիշներ:
 45 Տե՛ս Շահան Ե., Ալեքսանդրապոլի դաշնագրին 1930-ի կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարտլի, 1934, էջ 236-238, Չորմիսեան Լ., Կուսակցութիւնները, Եր., 1995, էջ 108:
 46 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՍՄՀ ԳԱ հրատ, Եր., 1967, էջ 137, Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), Եր., 1970, էջ 144-145, Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը խորհրդային Հայաստանում 1964-1988, Եր., 1990, էջ 268, Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., Եր., 1955, էջ 454, Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 377 և ուրիշներ:

Խորհրդային իշխանության «պատմագիտական խոսափողը» դարձած Լեոն իրեն բնորոշ զգացմունքայնությամբ առաջիններից մեկն է գրել Փետրվարյան ապստամբության մասին, հեզմանքով ու թունոտ ատելությամբ դատապարտել ՀՓԿ-ն, նրա պաշտոնաթերթը, Ս. Վրացյանին: Բայց նա այդպես էլ չի նշել որևէ իրական պատճառ, ինչը պայմանավորեց նման ելույթը: Դրանից հետո Լեոնին են հետևել խորհրդահայ ծայրահեղ հակադաշնակցական ուղղվածության մի շարք պատմաբաններ, որոնց համար առաջնային է եղել ոչ թե գիտական ուսումնասիրությունը, այլ ՀՅԳ-ի նկատմամբ անսահման ատելությունը:

1920-ական թվականների խորհրդահայ հետազոտողներից Փետրվարյան ապստամբությանը շատ թե քիչ օբյեկտիվ ու հիմնավոր մեկնաբանություններ է տվել թերևս միայն բոլշևիկ Բագրատ Բորյանը: Իր երկհատոր աշխատության մեջ բերելով բազում փաստեր՝ հեղինակը իրավացիորեն նշել է, որ ապստամբության իրական պատճառները պետք է փնտրել խորհրդային իշխանության վարած ռազմակոմունիստական պետականացման ու բռնագրավումների մեջ, դրան գումարած՝ շրջափակումը, ցուրտը, քաղցը և այլ աննպաստ պայմաններ: «Անկարգ կերպով, - գրում է Բ. Բորյանը, - գրավվում ու պետականացվում էր ամեն ինչ՝ զինվորական հագուստներ, արհեստավորների գործիքներ, մասնավոր և ամեն տեսակի բրնձի աղորիքներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղվի փեթակներ, սպիտակեղեն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիներ ... և այլն: Բնական է, որ այս բռնի միջոցները եղան երկրի ապստամբության հիմնական պատճառները»⁴⁷:

Բ. Բորյանը մեկիկ-մեկիկ թվարկում և ցույց էր տալիս Հայիեղկոմի հակաօրինական հրամաններն ու գործողությունները, որոնցով ոսմահարվում էին հենց խորհրդային օրենքներն ու հրամանագրերը: Դրա հետևանքով ժողովրդի անզամ այն մասը, որը լռությամբ և նույնիսկ համակրանքով էր ընդունել ռուս զինվորին ու խորհրդային իշխանությունը, մեկ-երկու ամիս անց ապստամբության դրոշ բարձրացրեց այդ նույն իշխանության դեմ:

Փետրվարյան ապստամբության և Հայիեղկոմի վարած քաղաքականության մեջ ուղիղ կապ է նկատել նաև բոլշևիկ, ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը: Նա ինքնաքննադատաբար խոստովանել է, որ «Հակահեղափոխությունը ստեղծվել է ոչ թե դաշնակների աշխատասենյակներում, այլ հանդիսացել է մեր քաղաքականության արդյունքը»⁴⁸:

Այն, ինչը տասնամյակներ շարունակ չեն տեսել կամ ավելի ստույգ՝ չեն ցանկացել տեսնել խորհրդահայ պատմաբանները, թարմ հետքերով ժամանակին արձանագրել ու ներկայացրել է նաև Հեղկոմի անդամ Ա. Մռավյանը՝ 1921 թ. մարտի 9-ին Դիլիջանից Մոսկվա ուղարկած իր նամակում. «Իմ խորը համոզմամբ, - գրում էր նա, - վերջին ամսում Կենտկոմի քաղաքականությունը՝ դաժան ձևով սպաների աքտորը, բռնագրավումները, ուժերից վեր սայլապարհակը, թուրքերի նկատմամբ վերաբերմունքի անորոշությունը, մեր անկարողությունը բնակչությանը տալու թեկուզ ինչ-որ բան - այս ամենը բնակչության մեջ առաջացրեց շատ նկատելի հոգեբանական ռեակցիա մեր դեմ...»⁴⁹:

Ա. Մռավյանը նկատել է նաև մեկ այլ զավեշտ. թեև Հայաստանում խորհրդա-

47 Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929, с. 126.

48 ՅԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 41:

49 Յ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 19:

յին իշխանությունը հաստատվել էր անարյուն, բայց բոլշևիկյան գաղափարախոսությունը պահանջում էր հեղափոխության համար արյուն քափել, դասակարգային կռիվներ մղել, ինչի մասին անթաքույց օրնիքում հայտարարում էր Հայաստանի «Կոմունիստ» պաշտոնաթերթը: «Մեր մամուլը,- այս առնչությամբ գրում էր Ա. Մռավյանը Դիլիջանից Մոսկվա ուղարկած մարտի 9-ի նույն նամակում, - աղմկալից ու ճղճղան տոնով կոչ էր անում քաղաքացիական կռիվ»⁵⁰: Սրանից դժվար չէ համոզվել, որ փաստորեն խորհրդային իշխանություններն էին հրահրում քաղաքացիական պատերազմ:

Ապստամբության պատճառների բացահայտման առումով ուշադրության արժանի են նաև Հայաստանում չեկայի լիազոր, իսկ փետրվարի 26-ից Հայաստանի հյուսիսային շրջանների Դիլիջան-Ղարաքիլիսայի հեղկոմի նախագահ Գ. Աթարբեկյանի զեկուցագրերից մեկում առկա մեկնաբանությունները, որոնք շատ ավելի սթափ ու հիմնավոր են, քան խորհրդային շատ պատմաբանների կողմնակալ ու պարզունակ գնահատականները:

Չեկիստ Գ. Աթարբեկյանը դեպքերի ու իրադարձությունների թարմ հետքերով փորձել է ցույց տալ Փետրվարյան ապստամբության ներքին ու արտաքին պատճառները: Ներքին պատճառների թվում նա նշել է. ա) Հայհեղկոմի ոչ ճիշտ գիծը (մեր կարծիքով՝ այդ սխալ գիծը պետք է բարդել առաջին հերթին Հայկոմկոմի կենտկոմի վրա - Ա. Հ.), բ) ծանր պարենային դրությունը, գ) Ռուսաստանից կտրվածությունը: Գ. Աթարբեկյանը խոստովանում էր նաև, որ դաշնակցականները հաջող կերպով նախապատրաստվել էին իրենց սխալների վրա⁵¹: Ուշագրավ է նաև, որ Հայհեղկոմի կարմիր բանակին ուղղված հեռագրերում, հրաման-գրություններում փետրվարյան դեպքերը ներկայացնելիս կիրառվել է «ապստամբություն» եզրույթը⁵²: Անգամ չեկայի լիազոր Գ. Աթարբեկյանն է ընդունել, որ փետրվարյան ելույթը «ապստամբություն» էր և ոչ թե խռովություն կամ առավել ևս՝ «արկածախնդրություն»⁵³:

Մինչդեռ խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ գերիշխողը ավանտյուրա (արկածախնդրություն) եզրույթն էր, ինչի նպատակը ՀՅ Դաշնակցությանն ավելի վարկաբեկիչ ձևով ներկայացնելն էր:

5. Արտաքին գործոնների դերակատարությունը

Խորհրդային պատմագրության մեջ ժամանակին զարգացվել է նաև այն տեսակետը, համաձայն որի՝ «դաշնակների պետական հեղաշրջումը» նախապատրաստվել ու հրահրվել է դրսից: Նման տեսակետի մշակման համար թերևս հիմք են հանդիսացել Ռ-Կ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի քարտուղար և Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեի դատողությունները: Այնուհետև մենշևիկյան Վրաստանի դերակատարության վրա՝ նա գրել է, որ դաշնակցական հեղաշրջման ոգեշնչողներին պետք է որոնել Թիֆլիսում⁵⁴: Նույն վարկածն առկա էր նաև Երևանից 11-րդ բանակի հրամանա-

50 Նույն տեղում:
51 Տե՛ս ԴԱԱ, միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 35, թ. 25:
52 Տե՛ս ԴԱԱ, ֆ. 1022, գ. 3, գ. 338, թ. 1, գ. 8, գ. 214, թ. 1, գ. 215, թ. 1, գ. 216, թ. 2, գ. 218, թ. 1 և այլն:
53 ԴԱԱ, միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 35, թ. 25:
54 Տե՛ս Գոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Գայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960, էջ 499:

տարությանն ուղղված փետրվարի 17-ի շտապ հեռագրում, որն ուղարկել էին ՀՍԽՀ կարմիր բանակի հրամանատար Մ. Մոլկաչանովը և զինվորական կոմիսար Ի. Սվիրիդովը: Նրանք հաղորդում էին, որ ապսամբությունը բռնկվել է՝ միաժամանակ ընդգրկելով մեծ տարածք, և դրա հիման վրա ենթադրում էին, որ «ղեկավար դերը գալիս է Թուրքիայից և Վրաստանից»⁵⁵:

Փետրվարյան ապսամբության նախապատրաստման մեջ դրսի գործոնների դերն ընդգծելու նպատակով խորհրդահայ գրեթե բոլոր պատմաբանները հենվել են անգլիական «Թայմս» թերթի 1921 թ. հունվարի 27-ի համարի մի տեղեկատվության վրա: Համաձայն այդ թերթի Կ.Պոլսի թղթակցի՝ հունվար ամսի սկզբներին Թիֆլիսում կայացած կոնֆերանսում ՀՅԳ ղեկավարները վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ: Այս ամենի հիման վրա խորհրդահայ պատմաբանները գրեթե միաբերան պնդել են, թե իբր՝ ՀՅԳ-ն, իր շուրջը համախմբելով հակախորհրդային ուժերին, նախապատրաստեց ապսամբություն⁵⁶: Ի դեպ, «Թայմս» թերթից քաղված վերը նշված տեղեկությունն արտատպվել է ՌՍՖՍՀ արտգործնախարարության բյուլետենում և այն առաջին անգամ օգտագործել է Գ. Օրջոնիկիձեն իր զեկուցումներից (ճառերից) մեկում⁵⁷: Այնուհետև այս վարկածը, որպես մեթոդական ուղեցույց, օգտագործել են նաև խնդրով հետաքրքրվող խորհրդային պատմաբանները:

Սակայն «Թայմս»-ի հենց այդ նույն՝ հունվարի 27-ի հաղորդման մեջ ասված էր, որ «առանց դրսի օգնության ոչ մի հույս չկա, որ Հայաստանը կկարողանա ազատվել բոլշևիզմի լծից»⁵⁸: Հասկանալի պատճառներով այս մասին խորհրդահայ պատմաբանները ոչինչ չեն հիշատակում: Մինչդեռ, վերոնշյալ տեղեկատվությունը դեռևս բավարար հիմք չէ հետևություն անելու, թե ՀՅԳ Թիֆլիսի կոնֆերանսը խորհրդային իշխանության դեմ ապստամբելու մասին որոշում է ընդունել:

Խորհրդահայ պատմաբաններից՝ 1921 թ. քաղաքացիական կռիվների պատմությանը ամենից ավելի քաջատեղյակ Արշ. Հակոբյանը, փորձելով Փետրվարյան ապսամբությունը կապել դրսի ուժերի օգնության ու միջամտության հետ, անգամ գրել է. «Դաշնակներին հաջողվեց անգլո-ֆրանսիական և ամերիկյան ինտերվենտների օգնությամբ 1921 թ. փետրվարյան ավանտյուրայով երիտասարդ Խորհրդային Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին քաշել քաղաքացիական պատերազմի մեջ»⁵⁹: Մեկ այլ տեղ նա շարունակել է նույն հանկերգը. «Իմպերիալիստները օգնում են ոչ միայն նյութապես, ռազմամթերքով, այլև իրենց զորքերով կռվում են սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշ քարձրացրած Անդրկովկասի աշխատավորության դեմ, համաձայնեցնում և միատեղ մշակում են սովետական կարգերի դեմ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի զինված

55 ԴԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 218, թ. 1:

56 Տե՛ս Դակոբյան Արշ., Դայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Եր., 1960, էջ 31-33, Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., Եր., 1955, էջ 451, Դարությունյան Շ., Դայ ժողովրդի պատմություն (1917-1968), Եր., 1970, էջ 144, Դայ ժողովրդի պատմություն, հ. 7, ԴՍՄԳ ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 136, Ներկարարյան Վ., Դայաստանի կոմպարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925թթ.), Եր., 1956, էջ 48-49, Աղայան Ծ., նշվ. աշխ., Եր., 1957, էջ 350, Դայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 319-320 և ուրիշներ:

57 Տե՛ս Бюллетень НКВД РСФСР, N 66, 23 февраля 1921 г., с. 30-31, Օրջոնիկիձեն Գ., Ընտիր հողվածներ և ճառեր, Եր., 1950, էջ 49:

58 Չուբարյան Գ., Դաշնակցության տաճկական օրինատացիան և Դայրեմիքի փրկության կոմիտեն, Եր., 1929, էջ 37-38:

59 Դակոբյան Արշ., Քաղաքացիական կռիվները Դայաստանում 1921 թ., Եր., 1948, էջ 4:

ելույթների պլանը, այդ թվում նաև դաշնակցական փետրվարյան ավանտյուրայի պլանը»⁶⁰: Ըստ հեղինակի՝ ստացվում էր, թե իբր՝ դրսի իմպերիալիստական ուժերն են մշակել Փետրվարյան ապստամբության պլանը:

Արտաքին գործոնի դերակատարության մասին տեսակետը տարբեր ձևակերպումներով պաշտպանել են նաև խորհրդահայ պատմաբաններ Գ. Գալոյանը, Ա. Մնացականյանը, Բ. Օհանջանյանը և ուրիշներ: Ըստ Գ. Գալոյանի՝ «Դաշնակցականների փետրվարյան ավանտյուրան նախապատրաստվել և իրագործվել է Անտանտի իմպերիալիստների և քեմալական Թուրքիայի կողմից»⁶¹: Ա. Մնացականյանը փետրվարյան «խռովությունը» դիտում էր իբրև «սովետների դեմ Անտանտի իմպերիալիստների իրագործած ռոնդգությունների շղթայի օղակներից մեկը»⁶²: Իսկ Բ. Օհանջանյանը, ավելի առաջ գնալով, հայտարարում էր. «Անգամ, եթե չլինեք բռնագրավումների քաղաքականությունը, դաշնակցական խռովությունը Հայաստանում տեղի կունենար»⁶³:

Կարծում ենք՝ հիմնավոր ու համոզիչ չէ Փետրվարյան ապստամբությունը անմիջականորեն կապել օտարերկրյա միջամտության ու օգնության հետ: Անշուշտ, արտաքին ուժերը (Անտանտի տերությունները) շահագրգռված էին Հայաստանում և Անդրկովկասում խորհրդային իշխանության տապալմամբ: Դրա համար հարկ եղած դեպքում նրանք պատրաստ էին խրախուսել և օգնել հակախորհրդային պայքարը: Բայց Հայաստանում խմորվող հակախորհրդային ապստամբության իրական, բուն նախադրյալները պետք է փնտրել երկրի ներսում, քանզի այն ունեցել է ամենից առաջ ներքին պատճառներ:

Արտաքին գործոնների շարքում խորհրդային պատմագրությունը, Անտանտի տերություններից զատ, ոչ պակաս կարևորություն է տվել Թուրքիային: «Թուրքիան,- գրում է խորհրդային հայտնի պատմաբան Ս. Խարյանդարյանը,- ամեն կերպ ջանում էր օգնել դաշնակցականների փետրվարյան հակահեղափոխական ավանտյուրային՝ նպատակ ունենալով լիովին զավթել Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը»⁶⁴: Իսկ խորհրդահայ պատմաբան Մ. Արզումանյանն անգամ կարծիք էր հայտնում, որ «դաշնակների փետրվարյան ավանտյուրան կազմակերպվեց ոչ միայն Անտանտի ու մենշևիկյան Վրաստանի, այլև քեմալական Թուրքիայի աջակցությամբ»⁶⁵:

Մինչդեռ, Փետրվարյան ապստամբության հանդեպ Թուրքիայի դիրքորոշման առումով Բյազիմ Կարաբեքիրի, Վրաստանում Թուրքիայի ներկայացուցիչ Բյազիմ բեյի, կապիտան Բահադդինի, թուրքական մամուլի և այլոց երբեմն հայահաճո թվացող ելույթներն ու լուրերը համադրելով քեմալական կառավարության իրական քաղաքականության հետ, կարելի է հանգել հակառակ եզրահանգմանը: Նախ՝ խորհրդային ու մասնավորապես խորհրդահայ հեղինակները գիտակցաբար թե անգիտակցաբար միամտություն են ունեցել հավատալու թուրքական ապատեղեկատվությանը՝ հաճախ այն ընդունելով որպես ճշմարտություն: Օրինակ՝ ժամանակի տարբեր լրատվամիջոցներում կարելի է հանդիպել տեղեկություններ այն մասին, որ քեմալական Թուրքիան օգնում է կամ պատրաստվում է

60 Նույն տեղում, էջ 51:

61 Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 388-389:

62 Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Եր., 1976, էջ 59:

63 Օհանջանյան Բ., Սովետական Հայաստանը..., Եր., 1982, էջ 73:

64 Хармандарян С. В., Ленин и становление Закавказской федерации 1921-1923, Е., 1969, с. 167.

65 Արզումանյան Մ., Արհավիրքից վերածունդ, Եր., 1973, էջ 376:

օգնել դաշնակցականների Փետրվարյան ապստամբությանը, նույն կերպ իբր՝ օգնել է Գ. Նժդեհին՝ Չանգեզուրի կռիվների ժամանակ: Նման լուրերը թուրքերի գիտությանը տարածում էին թուրքական, եվրոպական, կովկասյան և անգամ հայկական լրատվամիջոցները: Յավոք, թուրքերի քարոզչական կեղծիքներին երբեմն հավատ էին ընծայում նաև ՀՅԴ առանձին ներկայացուցիչները՝ կարծելով, թե նրանք կօգնեն իրենց ընդդեմ բոլշևիկների:

Երկակի և բազմակի քաղաքական խաղերի մարտավարությունը բնորոշ է թուրքական դիվանագիտությանը, քանզի դաշնակցականներին օգնելու պատրանք ստեղծելով՝ Թուրքիան Անտանտի տերություններին հասկացնում էր, թե իբր՝ պայքարում է խորհրդային վարչակարգի դեմ և որ ցանկանում է վերականգնել Հայաստանի անկախությունը ու նույնիսկ դրականորեն լուծել Հայկական հարցը՝ դրա դիմաց Անտանտից ստանալով մեծ շահաբաժիններ: Իսկ մյուս կողմից՝ թուրքական նույն քարոզչամեթոդներն էին խորհրդային կողմին հավաստիացնում էր, որ Թուրքիան դաշնակցականների թշնամին է, նրանց պետք է Հայաստանից արմատախիլ անել, և որ այդ գործում իրենք պատրաստ են օգնել կարմիր բանակին:

Եվ ահա, մամանօրինակ հակասական լուրերը (արխիվներում, մամուլում, դիվանագիտական նոտաներում) մոլորեցրել են խորհրդային շատ հեղինակների՝ քեմալականների իրական դեմքը բացահայտելու և գնահատելու առումով: **Սրանք թուրքական դիվանագիտությանը բնորոշ այն «ավանդական խաղերն» են, որոնք ժամանակ առ ժամանակ դրսևորվում են նաև մեր օրերում՝ հայ-թուրքական չարաբաստիկ արձանագրությունների հետ կապված:**

Իրականում չկա որևէ կոնկրետ փաստ, որ արտաքին ուժերը՝ Անտանտը կամ Թուրքիան, որևէ կերպ նախապատրաստած, օժանդակած, օգնած լինեն ՀՅԴ-ին ու Փետրվարյան ապստամբությանը, իհարկե, չբացառելով քարոզչական խրատ-խուսանքը, ինչպիսին, օրինակ, շռայլում էր թուրք կապիտան Բահաեդդինը երևանյան իր ելույթներում:

Իսկ Փետրվարյան ապստամբության նախապատրաստման գործում մենշևիկյան Վրաստանի հակախորհրդային դերակատարության պարզաբանման համար հարկ է ուշադրություն դարձնել վերջին տարիներին ՀՅԴ Կենտրոնական արխիվից հայտնաբերված նորահայտ մի վավերագրի վրա: Դրանից պարզվում է, որ 1921 թ. հունվար-փետրվարին Թիֆլիսում գտնվող ՀՅԴ բյուրոյի անդամներ Արշակ Չամայանը և Գևորգ Ղազարյանը առնվազն տեղյակ են եղել ապստամբության նախապատրաստման մասին: Ուստի նրանք փետրվարի 14-ին վեց էջանոց մի ձեռագիր նամակ-գրություն են հղել ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանին⁶⁶: Այս գրությունում խոսվում է «Հայաստանում խորհրդային իշխանության կազմակերպված տապալման⁶⁷» կենսական անհրաժեշտության մասին: Վ. Ղազարյանը այս փաստաթղթից հետևություն է արել, որ ՀՅԴ Բյուրոյի հիշյալ անդամները (նրանց թվում էր նաև Վրաստանում գտնվող Ս. Արարատյանը), եթե կոնկրետ չեն ղեկավարել, ապա գոնե տեղյակ են եղել հակախորհրդային ապստամբության նախապատրաստության մասին⁶⁸: Վ. Ղազարյանի հետևությունը լիովին համընկնում է մեր

66 Տե՛ս Ղազարյանի Վ., Գևորգյան Դ., Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2003, թիվ 1, էջ 46-51:

67 Նույն տեղում էջ 49:

68 Տե՛ս Ղազարյանի Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 54:

կողմից արդեն արտահայտված այն տեսակետին, որ հունվարի վերջերից ՀՅԳ-ն տարբեր մակարդակներով սկսել էր նախապատրաստվել զինված գործողության: Եվ այս պարագայում նույնպես խնդիրը սոսկ ապստամբությունը սկսելու ժամկետի՝ դեռևս անորոշ լինելու փաստի մեջ է:

6. Ե՞րբ սկսվեց Փետրվարյան ապստամբությունը

Հայ պատմագրության մեջ տարակարծություններ կան նաև ապստամբության ժամկետների հարցում: Խորհրդահայ հեղինակները գրեթե միաբերան Փետրվարյան ապստամբության սկզբնավորման օր են համարել փետրվարի 13-ը՝ այն կապելով Յապոնի (Համբարձում Պարոնյան) կողմից Դարալազյազի (Վայոց Ձոր) գրավման գործողության հետ⁶⁹:

Մինչդեռ, Գ. Նժդեհը, Վ. Գևորգյանը և ուրիշներ Վայոց Ձորի գրավման սկիզբը համարում են փետրվարի 14-ը⁷⁰:

Մեր կարծիքով՝ իրականությանն ընդհանրապես չի համապատասխանում խորհրդահայ հեղինակների այն պնդումը, որ Յապոնի գլխավորած զորքերի կողմից Դարալազյազի գրավումը իբր թե՝ ազդանշան է հանդիսացել Փետրվարյան ապստամբության համար: Փաստերը ցույց են տալիս, որ այս իրադարձությունները պարզապես հաջորդել են միմյանց՝ իրարից անկախ կերպով: Այսպես՝ ՀՅԳ-Գերագույն ատյանին ուղղված 1921 թ. օգոստոսի իր բացատրագրում Գ. Նժդեհը պարզաբանում էր, որ ինքը որոշակի տեղեկություններ ուներ Արարատյան Հայաստանում բոլշևիկների գործադրած հալածանքների ու բռնությունների մասին: Դրա համար որոշեց գրավել Դարալազյազը, կապ հաստատել և օգնության հասնել բանտարկված ընկերներին. «Իմ այդ որոշումը, - շարունակում է Գ. Նժդեհը, - միանգամայն անկախ էր Երևանի շրջանների առաջացած ապստամբական շարժումներից, որոնց մասին ինձ ոչ ոք իրազեկ չէր դարձրել»⁷¹: Գ. Նժդեհի վկայությամբ՝ ինքը Փետրվարյան ապստամբության մասին տեղեկացել է միայն Միսոն Վրացյանի փետրվարի 20-ի նամակից, որն իրեն է հասել փետրվարի 27-ին և Համո Օհանջանյանի մարտի 2-ի գրությունից⁷²:

Ինչպես տեսնում ենք՝ ուղղակի կապ ու պայմանավորվածություն չի եղել Դարալազյազի ռազմական գործողությունների և Արարատյան Հայաստանում սկսված ապստամբության միջև: Նժդեհը անձամբ տեղեկացված չի եղել Փետրվարյան ապստամբության նախապատրաստման վերաբերյալ և այդ մասին իմացել է միայն հաղթանակից շուրջ տասն օր անց:

Սակայն անպայման ներքին՝ հոգևոր կապ պետք է տեսնել Փետրվարյան ապստամբության և Մյունխի ինքնապաշտպանական կռիվների միջև: Պատահական չէր, որ հենց ինքը՝ Գ. Նժդեհը, հետագայում գրում էր. «Մյունիքը եղավ նաև հոգեբանական հրահրիչը փետրվարյան պոռթկումի»⁷³:

69 Տե՛ս Արզումանյան Ս., Դարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 559, Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Մ. Ներսիսյան, Եր., 1975, էջ 364, Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմություն, (1917–1968), Եր., 1970, էջ 145, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ Ա, Եր., 1954, էջ 101, Ղարիբջանյան Գ., նշվ. աշխ., Եր., 1955, էջ 454 և ուրիշներ:

70 Տե՛ս Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 133, Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), Եր., 2010, էջ 130:

71 Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 362:

72 Տե՛ս Նժդեհ Գ., նույն տեղում, էջ 135, 362:

73 Նժդեհ Գ., նույն տեղում, էջ 26:

Նկատի ունենալով փետրվարի առաջին կեսին ծավալված ապստամբության նախապատրաստական աշխատանքները, **մեր կարծիքով** ելույթի սկիզբը պետք է համարել փետրվարի 16-ի - լույս 17-ի գիշերը մի քանի ուղղությամբ Երևանի վրա հարձակումը: Դա եղել է ապստամբության շտաբը համարվող Ջառ գյուղի գաղտնի ժողովի որոշումը, որի մասին, ինչպես արդեն ասվել է, փետրվարի 13-ին ծածկագիր նամակով տեղեկացվել է Կոնդում թաքնված Ս. Վրացյանը, իսկ նույն նամակի պատճենն ուղարկվել է նաև Արագածոտն՝ Կարո Սասունուն⁷⁴:

7. Վերագնահատման փորձեր հետխորհրդային շրջանում

Հայոց պատմության վիճահարույց հիմնահարցերի ուսումնասիրության համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին «Վերակառուցման» ու հատկապես՝ ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի անկախության վերականգնման ժամանակաշրջանում:

Այս շրջանի առաջնեկը կարելի է համարել Կ. Սարգսյանի, Յու. Հովսեփյանի, Ս. Ամիրյանի, Գ. Գեղամյանի, Լ. Խուրշուդյանի և ուրիշների կողմից պատրաստված ու 1987-ին հրատարակված հոդվածների ժողովածուն⁷⁵: Նրանում, «Վերակառուցման» ոգուն համահունչ, քննարկվում են 1920-1921 թթ. Հայկեղկոմի և ՀԿ(բ)Կ կենտկոմի ներսում առաջացած տարաձայնությունները, «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, ձերբակալությունների, բռնագրավումների և այլնի վերաբերյալ փաստերը:

Մասնավորապես՝ Կ. Սարգսյանը հանգամանորեն բացահայտում է ՀՄԽՀ ղեկավարության շրջանում գոյություն ունեցող տարաձայնությունները, ցույց է տալիս, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները բռնագրավումների, խուզարկությունների, բանտարկությունների և այլ միջոցներով փաստորեն հայ հասարակությանը մղեցին քաղաքացիական պատերազմի⁷⁶: Դեռևս խորհրդային շրջանում պատմաբան Կ. Սարգսյանը քննադատել է խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ տարածում գտած այն թյուր տեսակետը, թե իբր՝ «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը Հայաստանում նպաստել է խորհրդային կարգերի ամրապնդմանը⁷⁷: Իրականում այդ քաղաքականությունը ավելի է խորացրել երկրի տնտեսական քայքայումը՝ առաջ բերելով քաղաքական ճգնաժամ: Նույն կարծիքին էր նաև նշված ժողովածուի հեղինակներից Ս. Ամիրյանը. ««Ռ-ազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանում կիրառելու հետևանքով հանրապետության տնտեսական կյանքը ոչ միայն չկարգավորվեց, այլև ավելի քայքայվեց՝ առաջ բերելով աշխատավոր բնակչության դժգոհությունը»⁷⁸:

74 Այդ մասին հանգամանորեն տես Աբրահամյան Մարտիրոս-Բազառնեցի, Իմ հիշելի հուշերը: Հայ դատի մատենաշար, թիվ 7, Թեհրան, 1978, էջ 102-107, Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, հ. 2, Պեյրուք, 1967, էջ 22-23, Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, թիվ 1, յուրեմբեր, էջ 90, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 49:

75 Տես «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.)», Եր., 1987:

76 Տես Սարգսյան Կ., Հայաստանում Սովետական իշխանության առաջին ամիսներին ՀԿԿ ներքին քաղաքականության մի քանի հարցերի մասին, «Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.)», Եր., 1987, էջ 17:

77 Տես Սարգսյան Կ., նշվ. աշխ., էջ 26:

78 «Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.)», Եր., 1987, էջ 73:

Ուսումնասիրողները ցույց են տվել, որ Հայաստանում, ըստ էության, չի իրականացվել պարենամասնատրում, այսինքն՝ ավելցուկ մթերքի գանձում, այլ գերազանցապես կատարվել են բռնագրավումներ, որովհետև բնակիչները մթերքի ավելցուկ չեն էլ ունեցել:

Արդեն հետխորհրդային շրջանում 1921 թ. Փետրվարյան ապստամբության և քաղաքացիական կռիվների պատմությունը նորովի է լուսաբանել Վ. Ղազախեցյանն իր «Հայաստանը 1920-1940 թթ.» մենագրության մեջ: Նորահայտ վավերագրերի հիման վրա պատմաբանը բազմակողմանիորեն և անկողմնակալ դիրքերից ներկայացրել է Փետրվարյան ապստամբության պատճառների, քաղաքացիական կռիվների ընթացքի, ավարտի ու հետևանքների գիտականորեն հիմնավորված ու ամբողջական պատմությունը: Հեղինակը անդրադարձել է նաև հիմնահարցի պատմության պատմագրությանը՝ գնահատականներ տալով բոլշևիկ գործիչների և դաշնակցական հեղինակների աշխատություններին⁷⁹: Դարձյալ Վ. Ղազախեցյանի հեղինակած՝ նույն հիմնահարցի ավելի սեղմ շարադրանքը տեղ է գտել նաև «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի 4-րդ հատորի 1-ին գրքում:

Ակադեմիական չափորոշիչներով իրականացված համակողմանի ուսումնասիրությունը Վ. Ղազախեցյանին հանգեցրել է այն եզրակացությանը, որ 1921-ի սկզբին «Հայաստանում ստեղծված պայթյունավտանգ իրադրությունը խորհրդային իշխանության քաղաքականության հետևանք էր»⁸⁰:

Քննելով ապստամբության շարժիչ ուժերի հարցը՝ Վ. Ղազախեցյանը չափազանցված է համարում փետրվարյան շարժումը համաժողովրդական դիտարկելու փորձերը, քանի որ, ըստ նրա, բնակչության որոշ մասն, այնուամենայնիվ, պաշտպանում էր խորհրդային իշխանությանը և բացի այդ՝ ապստամբությունը չէր ընդգրկել հանրապետության հյուսիսային շրջանները⁸¹:

Այնհայտ է, որ կոմունիստներից ու կարմիր բանակից բացի՝ խորհրդային իշխանությունը պաշտպանող գիտակից թե անգիտակից սոցիալական խմբեր եղել են, բայց դրանք քանակով այնքան մեծաթիվ չէին, որքան ապստամբության կողմնակիցները կամ խորհրդային իշխանության հակառակորդները, այլապես այն հնարավոր կլիներ ճնշել առանց ռուսական կարմիր բանակի օգնության: **Քանզի, վավերագիր նյութերի, այդ թվում՝ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունն ու համադրումը ցույց է տալիս, որ շարժման մեջ ակտիվ կամ պասիվ կերպով ներգրավված են եղել տասնյակ հազարավոր մարդիկ:**

Առանձնապես մեծ է եղել արևմտահայ գաղթականության մասնակցությունը, որի դժգոհությունը խորհրդային իշխանությունից ոչ միայն և ոչ այնքան սոցիալ-տնտեսական էր, որքան՝ քաղաքական: Օսմանյան կայսրության մեջ ապրած արևմտահայը չէր ընկալում և չէր ընդունում բոլշևիկների քարոզած սոցիալիզմի գաղափարներն ու պրակտիկան: Այդ իսկ պատճառով խորհրդային իշխանությունների համար արևմտահայը համարվում էր օտարոտի և անբարեհույս տարր: Մյուս կողմից՝ արևմտահայ գաղթականությունը խորհրդային իշխանություններից ակնկալում էր Հայկական հարցի լուծումը, սակայն այդ առումով նույնպես ոչինչ չստացավ: Գրեթե նույն ակնկալիքն ուներ նաև արևելահայությունը: Այդ

79 Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 28-45:
80 Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 39:
81 Տե՛ս Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 83:

ամենի կատարյալ ճախողումը առաջ էր բերել հակախորհրդային խմորումներ, որոնցից էլ, բնականաբար, օգտվեց ՀՅԴ-ն և գլխավորեց ապստամբությունը:

Սակայն դժվար է համաձայնել Վ. Ղազախեցյանի այն մտքի հետ, թե յուրա-
յիններին բանտերից ազատելուց հետո «ապստամբությունը կարելի էր և պետք էր
չշարունակել: Չէ որ հենց ապստամբության ղեկավարներն են խոստովանել
իրենց անհուսալիությունը»⁸²: Ասվածի կապակցությամբ հարց է ծագում. ինչպե՞ս
կարելի էր ձեռքավորվածներին բանտերից ազատելուց և իշխանությունը գրավե-
լուց հետո այն կամավոր հետ հանձնել: Չէ՞ որ նման դեպքում ապստամբության
ղեկավարությունը ժողովրդի կողմից կմեղադրվեր անվճռականության ու
դավաճանության մեջ: Նման բան լինում է միայն դավադիրների փոքր խմբի գոր-
ծողության ժամանակ, որն ի վիճակի չէ ճակատ առ ճակատ կռվելու պետական
իշխանության դեմ: Իսկ իրենց բաժին ընկած անհուսալի վիճակի մասին փետր-
վարյան շարժման ղեկավարների խոստովանությունը հնչել է ապստամբության
երկրորդ պարտության փուլում, այն էլ պայմանով՝ եթե դրսից օգնություն չատա-
ցվի: Այս հարցում Վ. Ղազախեցյանը պաշտպանել ու զարգացրել է Գ. Նժդեհի տե-
սակետը, համաձայն որի՝ խորհրդային բանտերի դռները փշրելուց հետո, ուր հո-
գեվարում էր հայ մտավորականությունը, ապստամբներն այնուհետև պետք է
ուղի բացեին՝ «մղվելու դեպի Սյունիք»⁸³:

8. Երկու ճշգրտում

Առաջին, հետխորհրդային շրջանի հայ պատմագրության կողմից փաստարկ-
ված կերպով քննադատվում են Թուրքիայից օգնություն ստանալու ակնկալիքով
Ս. Վրացյանի հղած՝ մարտի 15-ի, 18-ի, 21-ի հայտնի նամակ-դիմումները⁸⁴: Ս.
Վրացյանը Անգորայի կառավարությանը ուղղված իր դիմումները հետագայում
փորձել է բացատրել նրանով, որ «թրքական սպառնալիքը դամոկլյան սրի պես
կախված էր հայ ժողովրդի գլխին»⁸⁵: Դրանով նա փաստորեն ուզում էր ասել, որ
դիմումների նպատակը թուրքական վտանգի չեզոքացումն էր:

Իհարկե, կար թուրքական վտանգը. Կարաբեքիրի գործը կարող էր ցանկա-
ցած պահի Արաքսի վրայով և Շիրակից մտնել Արարատյան դաշտ, գրավել
Երևանը՝ այն բոլոր աղետալի հետևանքներով, ինչպիսիք արձանագրվել էին
Ալեքսանդրապոլի գավառում: Սակայն կարծում ենք, որ ՀՓԿ-ն օգնություն էր
խնդրում Թուրքիայից ոչ միայն թուրքական հնարավոր վտանգը կանխելու, այլև
նրա օգնությամբ իշխանությունը պահելու համար:

Թուրքիայից օգնություն ստանալու հարցի վերաբերյալ հիմնավորված չէր
նաև Կարո Սասունու մեկնաբանությունը: Նա գրում էր, որ «ՀՓԿ ոչ մի անգամ

82 Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 83:

83 Նժդեհ Գ., Ազատ Սյունիք, «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 84:

84 Տե՛ս ԳԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, ք.ք. 51, 65, 93: Տե՛ս նաև ֆ. 113, ց. 3, գ. 42, ք. 96:

85 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 570: Պարզվում է, որ թուրքերին դիմելը
և նրանց հետ համաձայնության գալը միայն ՀՓԿ նախաձեռնությունը չի եղել: Այդ մտայնությունը
տիրել է նաև Թիֆլիսում գտնվող Բյուրոյի անդամների շրջանում: Մասնավորապես, Ա. Ջամայանի և
Գ. Ղազարյանի՝ ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Սհարոնյանին ուղղված փետրվարի 14-ի նամակ-
գրությունում զարգացվում էր այն միտքը, որ իբրև բոլշևիկների իշխանության տապալման նախապայման
«հեղաշրջման դեպքում թուրքական վտանգը Հայաստանի սահմաններից չեզոքացնելու համար պետք
է համաձայնություն կայացնել Թուրքիայի հետ», տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների, 2003, թիվ 1,
էջ 50:

իր մտքով չի անցկացրել թրքական զորքեր կանչելու Հայաստան, բացի ռազմամթերք խնդրելուց»⁸⁶: Սակայն փաստը ցույց է տալիս, որ Ս. Վրացյանի մարտի 18-ի հեռագրում խոսվում էր Թուրքիայից ռազմական օգնություն ստանալու ձևերի մասին: Մասնավորապես՝ մամակ-հեռագրի 3-րդ կետում ասվում էր. «Հաղորդել մեզ, թե արդյոք ԱՄԺ կառավարությունը հնարավոր գտնում է հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և եթե կարող են, ի՞նչ չափով և եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում»⁸⁷: Դժվար չէ նկատել, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե զենք-զինամթերքի, այլ ռազմական օգնության մասին:

Մինչդեռ 1920 թ. աշնանը քենալական Թուրքիան, ըստ էության, ծրագրել էր վերացնել հայկական պետությունը և աշխարհի երեսից իսպառ բնաջինջ անել հայությանը: Այդ մասին վկայում են թուրքագետ Ռ. Սաֆրաստյանի կողմից վերջերս հրատարակված նորահայտ վավերագրերը, որոնք անհերքելիորեն փաստում են, որ Թուրքիայի գերագույն նպատակը եղել է **ՀՀ խորտակումը և հայության ոչնչացումը**⁸⁸: Նման անհերքելի փաստերի խորապատկերի վրա ՀՓԿ-ի կողմից թուրքերին ուղղված դիմում-խնդրանքները, մեր կարծիքով, չեն տեղավորվում ողջամիտ քաղաքականության նորմերի մեջ:

Երկրորդ, արդի հայ պատմագրության մեջ քննադատվում են նաև ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն ուղղված հեռագրերը, որոնցում տեղեկացվում էր Հայաստանում խորհրդային իշխանության տապալման, ուստի՝ մոսկովյան բանակցություններում Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցության անօրինականության մասին:

Այս կապակցությամբ խորհրդային պատմաբան Ա. Հեյֆեցը ժամանակին գրել է, որ Մոսկվայի կոնֆերանսին պետք է մասնակցեր Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը, սակայն Երևանը գրավելուց հետո ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանը հայտարարություն տարածեց, որ նա իրավունք չունի հանդես գալու Հայաստանի անունից⁸⁹: Հայ ժողովրդի պատմության նախորդ խորհրդային շրջանի ուրիշատրոյակում ևս նշվում է, որ թուրքերը, օգտագործելով Վրացյանի դիմումը, հրաժարվում են բանակցություններ վարել Հայաստանի պատվիրակության հետ⁹⁰:

Այս առնչությամբ խորհրդահայ մեկ ուրիշ պատմաբան՝ Ա. Մնացականյանը, է՛լ ավելի է խտացրել գույները. «հենց կոնֆերանսի բացման օրը ստացվում է սև գույժ՝ «փրկության կոմիտեի» նախագահի հեռագիրը, որով հաղորդվում է, թե Հայաստանի հեղկոմը տապալվել է, և իշխանությունը անցել է «փրկության կոմիտեին... և որ Բեկզադյանը և Տեր-Գաբրիելյանը իրավունք չունեն մասնակցելու այդ կոնֆերանսին»⁹¹:

Սփյուռքահայ հեղինակներից Շ. Նաթալին ևս, ձայնակցելով խորհրդային պատմաբաններին, գրել է, թե իբր՝ Փետրվարյան ապստամբության և Վրացյանի հայտնի հեռագրի հետևանքով Հայաստանի պատվիրակության մասնակցություն-

86 Սատունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Յայրենիք», Պոսթըն, 1925, թիվ 2, էջ 104:
87 ՅԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, ք. 51, ֆ. 113, ց. 3, գ. 42, ք. 96:
88 Տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, Եր., 2006, էջ 424–425, տե՛ս նաև Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Եր., 2009, էջ 190–191, տե՛ս նաև Կեմալ Մ., Путь новой Турции, т. 3, М., 1943, с. 314, տե՛ս նաև Գալոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 43–44:
89 Տե՛ս Хейфец А. Н., Советская дипломатия и народы Востока (1921–1927), М., 1966, с. 94.
90 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, ՅՍՄԳ ՊԱ հրատ., Եր., 1967, էջ 140:
91 Մնացականյան Ա., Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Ե., 1976, էջ 71:

նը Մոսկվայի խորհրդածողովին խափանվեց⁹²:

Մինչդեռ իրականությունն այն է, որ Ս. Վրացյանի ռադիոգիր-հեռագիրն ուղարկվել է մարտի 12-ին, որոշ տվյալներով՝ 14-ին⁹³, երբ ռուս-թուրքական խորհրդածողովն արդեն իր եզրափակիչ փուլում էր: Այնինչ հայ պատվիրակների մասնակցությունը կոնֆերանսին արգելված է եղել հենց սկզբից՝ փետրվարի 26-ից:

Ավելին՝ ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի մարտի 12-ի հայտնի հեռագրի կապակցությամբ իր վերջին մեծագրությունում տեղին դիտարկում է կատարել Վ. Ղազախեցյանը՝ նշելով, որ այդ օրերին ՀՓԿ-ն անգամ տեղյակ էլ չի եղել, որ Հաստատանի պատվիրակությանը թույլ չի տրվել մասնակցելու Մոսկվայի բանակցություններին⁹⁴:

Ի դեպ, այս հարցը լուսաբանվել է դեռևս խորհրդային շրջանում: Պրոֆ. Է. Ջոհրաբյանը, հենվելով պատմական փաստերի ժամանակագրական ճշգրիտ քննության վրա, ցույց է տվել, որ Ս. Վրացյանի մարտի 12-ի ռադիոհայտարարությունը չէր կարող հետին թվով ազդել Հայաստանի պատվիրակության՝ փետրվարի 26-ից Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա⁹⁵:

Իսկ հետխորհրդային շրջանում գրված իր մեկ այլ աշխատությունում է. Ջոհրաբյանը կրկին փաստարկված կերպով ցույց է տվել, որ Հայաստանի պատվիրակության չմասնակցելը կոնֆերանսին կապ չի ունեցել «փետրվարյան իրադարձությունների» հետ, քանզի դեռևս կոնֆերանսի բացման նախօրյակին թուրքական պատվիրակությունը իր կառավարությունից միացյալ (այսինքն՝ քառակողմ- Ա.Հ.) կոնֆերանսի մասնակցելու լիազորություն չի ստացել⁹⁶:

Ուստի՝ որևէ քննադատության չի դիմանում հետխորհրդային շրջանում լույս տեսած Գ. Գալոյանի և Ե. Սարգսյանի աշխատություններում դարձյալ չարչրկված այն պնդումը, թե իբր՝ Հայաստանում տեղի ունեցած փետրվարյան պետական հեղաշրջումն էր պատճառը, որ քեմալական պատվիրակությունը դեմ արտահայտվեց կոնֆերանսին Հայաստանի մասնակցությանը⁹⁷:

Ընդ որում՝ Ե. Սարգսյանը հետևյալ կերպ է ներկայացնում հարցը. իբր՝ «սկզբում նախատեսված էր հրավիրել հայ-թուրքական կոնֆերանս՝ քննարկելու համար հայ-թուրքական սահմանային հարցերը: Սակայն 1921 թ. փետրվարի 18-ին Երևանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, իշխանության գլուխ անցան դաշնակները՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Թուրքական պատվիրակությունը օգտվելով դրանից, վճռականապես հրաժարվեց Հայաստանի հետ համատեղ կոնֆերանսից: Որպեսզի կոնֆերանսը չձախողվի, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ստիպված էր համաձայնվել, որ կոնֆերանսը ընթանա Ռուսաստանի և Թուրքիայի միջև, բայց անպայման Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների մասնակցությամբ: Թուրքական պատվիրակությունը համառորեն դեմ էր Հայաստանի պատվիրակության մասնակցությանը կոնֆերանսին: Թուրքերը կտրականապես հրաժարվեցին բանակ-

92 Նաթալի Շ., Երեք դաշնագրեր, Պեյրուս, 1957, էջ 11:

93 Տե՛ս ՂԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 55:

94 Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 59:

95 Տե՛ս Ջոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922թթ.), Եր., 1979, էջ 213-214:

96 Տե՛ս Ջոհրաբյան Է., Նախիջևանի հիմնահարցը 1920թ. մայիս-1921 թ. հոկտեմբեր, Եր., 2010, էջ 294-295:

97 Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 440, Սարգսյան Ե., Դավադիր գործարք (Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա), Եր., 1995, էջ 85:

ցել Խորհրդային Հայաստանի պատվիրակության հետ»⁹⁸:

Այս երկարաշունչ մեջբերումն արվեց ցույց տալու համար փաստերի ակնհայտ աղավաղումը: **Նախ**՝ Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրից հետո հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու որևէ պայմանավորվածություն չի եղել և **երկրորդ**՝ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ո՛չ կոնֆերանսից առաջ և ո՛չ էլ կոնֆերանսի ընթացքում թուրքական պատվիրակությունը Հայաստանի պատվիրակության մասնակցելու կամ չմասնակցելու հարցում որևէ ակնարկ չի արել՝ այն պատճառաբանելով փետրվարյան իրադարձություններով:

Իրականությունն այն է, որ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Ռուսաստանը և Թուրքիան համաձայնության են գալիս՝ հրավիրելու ռուս-թուրքական կոնֆերանս՝ բարեկամության պայմանագիր կնքելու նպատակով: Խորհրդային կողմն առաջարկել էր, որ կոնֆերանսին մասնակցեն նաև Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակները, սակայն չէր ստացել թուրքերի գրավոր համաձայնությունը: 1921 թ. փետրվարի երկրորդ կեսին Մոսկվա ժամանած թուրքական պատվիրակությունը հրաժարվեց հայկական, նաև՝ ադրբեջանական պատվիրակությունների մասնակցությունից՝ պատճառ բերելով ոչ թե Փետրվարյան ապստամբությունը, այլ Անգորայի կողմից հայերի հետ բանակցություններ վարելու լիազորություն չունենալը⁹⁹: Սակայն բերված փաստարկները ամենևին էլ չեն արդարացնում Ս. Վրացյանի՝ Ռուսաստան ու առավել ևս՝ Թուրքիա ուղարկած հեռագրերը:

Թերևս, Փետրվարյան ապստամբության փաստը ոչ նպաստավոր մթնոլորտի ստեղծման առումով որոշակի բարոյահոգեբանական ազդեցություն ունեցել է ռուս-թուրքական բանակցային գործընթացի վրա: Այդ մասին վկայում էր Խորհրդային Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը Բաքվում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Մ. Աթաբեկյանին 1921 թ. մարտի 18-ին ուղղված նամակում¹⁰⁰:

Եզրափակելով՝ «Կարծում ենք, որ որքան էլ դաժան ու ատելի լինեն բոլշևիկների թալանն ու ավերածությունները, և որքան էլ փորձենք դիվանագիտական քայլ որակել ՀՓԿ դիմում-նամակները՝ ուղղված թուրքերին, այդուհանդերձ, պատմաբանական ու բարոյական առումներով որևէ արդարացում չունեն թուրքական կողմնորոշմանն ապավինելու փորձը, առավել ևս՝ հավատարմությունը Ալեքսանդրապոլի պայմանագրին»¹⁰¹:

9. Չուզակչիռներ՝ 90-ամյա հեռավորությունից

Այսպիսով, Փետրվարյան ապստամբությունը Հայոց պատմության ամենից ավելի հակասական գնահատականների արժանացած իրադարձություններից մեկն է, որը ՀՅԳ-բոլշևիզմ գաղափարական անհաշտ պայքարի հորձանուտում շարունակաբար քաղաքականացվել է: Ուստի նման իրադարձության գիտական գնահատականը չի կարող տեղավորվել **միաչափ** եզրահանգումների շրջագծում:

98 Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 185:

99 Ավելի մանրամասն տես Չակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 109-136:

100 Տես ՉԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25, գ. 319, թ. 22:

101 Չակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 202:

Այստեղ որոշակի **գուգակչիռներ** են հարկավոր՝ կողմերից յուրաքանչյուրի քայլերին տրվող գնահատականների «ռացիոնալ հատիկը» քաղաքական ամբաստանությունների ու բանավեճերի դաշտից տարանջատելու համար: Փորձենք դիմել **Պլուտարքոսի** ժամանակներից հայտնի այդ մեթոդին: Առ այդ՝ պարտավոր ենք եզրակացնել, որ

առաջին, «Փետրվար 18-ը» և՛ հերոսական է՝ իբրև ամեն տեսակի բռնության դեմ հայ ժողովրդի ազատության ու անկախության համար պայքարի մարմնացում, և՛ ողբերգական՝ իր կոնկրետ-թվաբանական հաշվեկշռի՝ մարդկային կոռուստների, երկկողմանի տեռորի և այլ բացասական հետևանքների պատկերով,

երկրորդ, անվիճելի է, որ Փետրվարյան ապստամբությունը ոչ թե ՀՅԳ կողմից նախապես ծրագրված ու նախապատրաստված գործողություն էր կամ էլ հրահրվել էր դրսից, այլ այն Հայիեղկոմի ու ՀԿ(բ)Կ կենտկոմի վարած անհեռատես քաղաքականության և հանրապետությունում առաջ եկած օբյեկտիվ դժվարությունների օրինաչափ հետևանքն էր,

երրորդ, Հայաստանի Հանրապետության դաշնակցական ղեկավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո կրկին այն հետ վերցնելու հատուկ նպատակ չէր դրել իր առջև, ինչը երևում է ՀՅԳ Բյուրոյի 1920 թ. դեկտեմբերի 1-ի հայտնի որոշումից:

Սակայն կուսակցության շարքերում եղել են առանձին անհատ գործիչներ, խմբապետեր, ովքեր Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից մտորել ու քայլեր են ձեռնարկել խորհրդային իշխանության տապալումով Հայաստանի անկախությունը վերականգնելու համար: Հարկ է հիշեցնել, որ մինչ այդ՝ 1920 թ. նոյեմբերի 30-ի և դեկտեմբերի 1-ի հայտնի խորհրդակցություններում ՀՅԳ որոշ գործիչներ՝ Հ. Օհանջանյանը, Ռ. Դարբինյանը, Արշ. Հովհաննիսյանը, Ս. Արարատյանը դեմ են քվեարկել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման առաջարկին: Բայց այս տեսակետի կողմնակիցները փոքրաթիվ են եղել: Խորհրդայնացումից հետո, Հայիեղկոմի վարած բռնությունների քաղաքականությանը զուգնթաց, ՀՅԳ-ի ներսում խորհրդային իշխանությանն ընդդիմադիրների թիվը ստվարանում է և փետրվարի սկզբներին տիրապետող է դառնում:

Չորրորդ, ուշագրավն այն է, որ Փետրվարյան ապստամբությանն աջակցել են Հայաստանում գործող գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԳ-ն, ՀԺԿ-ն, ՀՍՌԿ-ն, Ս.Գ. Հնչակյան կուսակցությունը, ՌՄԳԲԿ-ն (մենշևիկները), Հայ սոցիալիստ-հեղափոխականները (էսէռներ), ինչպես նաև՝ Մայր աթոռ Ս. Էջմիածինը, ապստամբներին ուղղված՝ կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցի հայրապետական օրհնությամբ,

հինգերորդ, եթե Փետրվարյան ապստամբությունը այսպես թե այնպես կարելի է դասել քաղաքացիական կռիվների շարքը, ապա մույն թվականին տեղի ունեցած Լոռու «Չեզոք գոտու» և Չանգեզուրի կռիվները՝ ոչ, որովհետև վերջիններս, ըստ էության, ազգային-ազատագրական ու ինքնապաշտպանական կռիվներ էին հայկական այդ երկու երկրամասերը Վրաստանի և Ադրբեջանի ոտնձգություններից պաշտպանելու համար,

վեցերորդ, նախքան փետրվարի 18-ը Փետրվարյան ապստամբության կազմակերպիչների և Սյունիքի ինքնապաշտպանական-ազատագրական կռիվների ղեկավարների միջև չի եղել գործողությունների կոորդինացում, բայց գոյություն է ունեցել բարոյահոգեբանական ընդհանուր տրամադրվածություն,

յոթերորդ, որքան էլ դաժան ու ատելի լինեին բոլշևիկների կողոպուտներն ու բռնությունները, և որքան էլ փորձ արվի դիվանագիտական ու հարկադիր քայլեր որակել ՀՓԿ դիմում-նամակները Թուրքիային, այդուհանդերձ, պատմաքաղաքական ու բարոյական առումներով դրանք, ինչպես նաև ՀՓԿ պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ի թրքամետ խմբագրականները որևէ արդարացում չունեն,

ութերորդ, խորհրդահայ պատմակուսակցական գրականությունը 70 տարի շարունակ խիստ բացասական գնահատականներ է տվել Փետրվարյան ապստամբությանը. նույնպիսին են եղել նաև Սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակ-հուշագիրների, այդ թվում՝ 1921 թ. փետրվարին ապստամբությանն աջակցած կուսակցությունների՝ հնչակյանների և ՀԺԿ-ի ու ՀՍՈՒԿ-ի անմիջական իրավաժառանգորդ ՌԱԿ-ի անդամների գնահատականները,

իններորդ, ՀՅԴ պատմագիր և հուշագիր հեղինակների ու գործիչների վերաբերմունքն ու գնահատականը միայն մեկ բացառությամբ¹⁰² եղել է միանշանակորեն դրական, այն աստիճանի, որ բացի վերը նշված բացառությունից (Միքայել Վարանդյան), լուրջ փորձ չի արվել ՀՓԿ գործողությունների մեջ տեսնել էական սխալներ,

տասներորդ, հետխորհրդային շրջանում Հայաստանում գործող մասնագետ-պատմաբանները աստիճանաբար շտկում են նախկինում թույլ տրված ծայրահեղորեն բևեռացված գնահատականները և փորձում են մշակել ժամանակին համահունչ, ոչ կողմնակալ, փաստերով հիմնավորված գիտական գնահատականներ:

Ուստի՝ պատմական փաստերի ու փաստաթղթերի կուտակման և համադրման, ինչպես նաև անցած 90 տարիների ընթացքում ստեղծված պատմագիտական ժառանգության քննական վերլուծության միջոցով կարելի է եզրակացնել.

ա) փետրվարյան իրադարձությունները մի խումբ խմբապետ-մատուցերիստների ծրագրած արկածախնդրությունը չէին, այլ հայ ժողովրդի արդարացված ապստամբությունը բոլշևիկյան իշխանության գործադրած բռնությունների ու թալանի դեմ, որի ղեկավարությունը ղեպքերի զարգացման որոշակի փուլում ստանձնեց ՀՅԴ-ն,

բ) Փետրվարյան ապստամբությունն ունեցել է և՛ դրական, և՛ բացասական դրսևորումներ ու հետևանքներ և անգամ իր պարտությունից հետո էլ հարկադրել է բոլշևիկներին՝ վարելու ավելի մեղմ ու հանդուրժողական քաղաքականություն,

գ) Իբրև պատմության ուսանելի դաս՝ **փետրվար 18-ը** վկայում է, որ անարդարությունները, անօրինականությունները, բռնությունն ու թալանը իրենց կրիտիկական սահմանն անցնելու դեպքում, հայ հանրությունն ունակ է ոտքի ելնելու իր ներքին իշխանավորի ու հարստահարողի դեմ նաև մեր ժամանակներում:

Ուրեմն՝ Փետրվարյան ապստամբությունը հայոց հաջորդական սերունդների հիշողության մեջ եղել է ու կմնա իբրև հայ ժողովրդի հերոսական ու միաժամանակ նաև՝ ողբերգական պատմության անբաժան մասը:

102 ՀՀԳ արտասահմանյան մարմինների Վիեննայի 1923 թ. ապրիլ-մայիսյան խորհրդաժողովում որպես առանձին տեսակետ Մ. Վարանդյանը ապստամբությունը որակել է «ավելորդ արկածախնդրություն», տես Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 166:

Summary

THE FEBRUARY REVOLT IN ARMENIAN HISTORIOGRAPHY

Investigatory Comparative Assessments from the Perspective of a 90-year interval

Ararat M. Hakobyan

In the article, the viewpoints and evaluations expressed in Soviet, Diasporian and Post-Soviet Armenian historiography on the 1921 February Revolt have undergone thorough investigation.

In the previous decades Armenian historiography gave diverse, sometimes contradictory standpoints, viewpoints, interpretations and evaluations of this important event.

On the one hand, in the Soviet-Armenian historiography the February Revolt was qualified as a reckless attempt of the revolutionists and mauserists, and on the other hand, Armenian Revolutionary Federation historiographers and authors presented it as a voluntary pan-national revolution. The position of Soviet-Armenian historiography was also protected in a certain consistent way by the Democratic Hunchakians, Democratic Liberals and Communist authors of the Diaspora.

By making comparative assessments between the two contradictory standpoints of post-soviet elucidations and revolutionists' interpretations that exist in Armenian historiography, and on the basis of diverse documents, old and new testimonies, memoranda, press, etc. in the article, an attempt is being made to explain the real, factual, impartial image of the February Revolt, to clarify the processes of its preparation, reasons, essence, the moving forces, stages, the influence of external factors, as well as other issues which up to now remain vague.

After the independence of Armenia the Armenian historiographical mind attempts to overcome the previous mistakes and stereotypes existing in Soviet and Diasporian Armenian historiography and to elaborate a scientifically grounded standpoint concerning the 1921 February Revolt.